




Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format  
Adapt — remix, transform, and build upon the material

19

ԲԱՆ—ԳՅՈՒՂ ԹԱՏՐՈՆ

Վ. ԱՎԵՐՅԱՆՈՎ

ՃԵՂՔՎԱԾՔ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ — 1931

17 JUL 2006

19 NOV 2010

89171-  
Ա-79  
պ.

ԲԱՆ—ԳՅՈՒՂ ԹԱՏՐՈՆ

Վ. ԱՎԵՐՅԱՆՈՎ

Ճ Ե Ղ Ք Վ Ա Ծ Ք

Փոխադրություն Գ. ԳԱՐԻԵԼՅԱՆԻ

1787

Է-5-70231



1931

ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏՆԵՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ  
ՀՐԱՎԱՐԱԿ. № 1747  
ԳԼԱՎԼԻՏ 6590 (Բ)  
ՊԱՏՎԵՐ 3843  
ՏԻՐԱԺ 4000

### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՀԱՄՈ ՂԱՐԻԲՅԱՆ—23 տարեկան

ԱՍԼԱՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ—«Արշալույս» կոմունայի վարչության նախագահը

ԱՊՈՒՐՅԱՆ ՊՈՂՈՍ—նախկին աղայական խոհարար, այժմ աշխատում է կոմունայում

ՅԵՓՐԱՏ ԲՈՒՅՐԻԿ—կոմունայի գումի վարիչը:

ԼՈՒՍԻԿ—Ղարիբյանի կինը, Բուռնագյանի աղջիկը:

ԲՈՒՌՆԱԶՅԱՆ ՄԱՐԿՈՍ—մեծատնտես գյուղացի, ամուր միջակ, Լուսիկի հայրը

ԱՆԹԱՌԱՄ—Բուռնագյանի կինը

ԶՈՓՈՒՌԵՆՅ ՄԱՇՈ—այրի կին, գաղտնի գինեվաճառ:

ԶԱՂԱԼՅԱՆ ՄԻՆԱՍ—Բուռնագյանների բարեկամը, կուլակ:

ԿՈՄՈՒՆԱՐ—ԿՈՄՈՒՆԱՐՈՒՀԻՆԵՐ

ՇՎԻ ՓԶՈՂ

2-րդ և 3-րդ պատկերների միջև անցնում է 7-8 ամիս:

## ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

(Բեմը ներկայացնում է մի միջանցիկ սենյակ, վարտեղ սեղանատուն է: Կահավորումը՝ մի ֆանի սեղան, աթոռներ, պատի հեռախոսի վերը Լենինի նկարը: Աջ դուռը տանում է դեպի խոհանոց, վարտեղից լսվում է պլիտայի ֆշշոցը, յերգի և ծիծաղի աղմուկ: Ձախ դռան վրա ցուցանակ.— «Արշալույս կոմունայի վարչություն»: Մեջ տեղում դուռ, դեպի պատշգամբ: Վարագույրը բացվելիս, սեղանին թափված են խոհանոցի պղինձներ:)

### ՏԵՍԻԼ 1

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—(խոհարարի զգեստով, սպիտակ թասակով, մեծ դանակը ձեռքին, կաղամբ է կտրում. ֆքի տակ փնփնքում, է, ապա հետ դնելով դանակը, ուղղում է թասակը, սրբում է ֆրտիսֆը) *Եյ, աղջկերքը թյալամ մատուցեք:*  
(խոհանոցում չեմ լսում)

**ԾՈ,** *հարվածալիներ, թյալամը կսեմ պատրաստ է:*

**1 ԱՂՋԻԿ.**—*Ես ա բերում եմք:* (խոհանոցում ծիծաղ)

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—*Բան ու գործ թողեր, թյալածի կենեն անսխառները:*

### ՏԵՍԻԼ 2

*Մտնում են 1 և 2 աղջիկները*

**1 ԱՂՋԻԿ.**—*Վո՞րդի դենեք:*

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—(ցույց տալով սեղանը) *Իստեղ: Հ՞ը, Ի՞նչ կղընջըրտաք: Ի՞նչ է ընկել դատարկ դլուխներդ:*

**ԱՂՋԻԿԵՐՔ.**—(փրփկացնելով) *Հա, հա... հի, հի, հա, հա...*

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—*Դե, թե՛ ել... ելի... Հիմա՞րներ, գետինը մտնիք հա՞...*

1 ԱՂՋԻԿ.—(չդադարելով ծիծաղել, ցույց տալով յերկրորդին)  
Սա...սա... Համոյին... Ղարիբյանին... (ծիծաղից չի  
կարողանում շարունակել)

2 ԱՂՋԻԿ.—Վայ, նանի... չեմ կարա...

1 ԱՂՋԻԿ.—(ծիծաղելով) Նստել եր Համոն, պատուհանի տակ իշա-  
վոնիկի վրա... վոնց վոր ցնդած ըլեր... երազում եր...

2 ԱՂՋԻԿ.—Կծով ջուրը... շուտ դլխին...

1 ԱՂՋԻԿ.—Նա յեւ վեր թռաւ ու վախաւ, նաչաղիւ դրածի պես...

2. ԱՂՋԻԿ.—Հետ ել չնայեց:

ԱՊՈՒՐՅԱՆ.—Գլուխ խելոք բան եք երել: Այ ողուլը առանց են  
եւ նախոչ ե, դուք ել մե սրեն հողին հանիք:

1 ԱՂՋԻԿ.—Բա են լավ ա, վոր ուրիշ աղջիկերանց հետ ա ման դա-  
լի: Խի, մեր կոմունումը աղջիկ չկա:

2 ԱՂՋԻԿ.—Անհատական կուսիկի հետ ա ման դալի:

1 ԱՂՋԻԿ.—Վերապարական ա, թե մենք նրանցից վա՞տ ենք:

2 ԱՂՋԻԿ.—Հըլա նրանցից ել մաքուր ենք... Ամեն չարաթ բաղնիք  
ենք գնում:

1 ԱՂՋԻԿ.—Շորի վերաբերյալ ել մեզ, կոմունարիզմներին, չեն  
հասնի եք մենատնտես-աղջիկները...

ԱՊՈՒՐՅԱՆ.—Լավ, լավ, հերիք ե... Տվեք խտեղ են քայլամը...  
(խոհանոցում ինչ վոր բան սարսափելիորեն փշշում է)  
Թափվի դը... Թեղ...

ԱՂՋԻԿԵՐԻ.—Վայ... (նշում են ու վազում)

### ՏԵՍԻԼ 3

ԱՊՈՒՐՅԱՆ.—(նրանց հետևից) Ըհը. ծիծաղի վերջն եղիկ ե: (հա-  
ռաչելով) Եխ, ջահելություն: ջահելություն... Բա, քա-  
ղաքացի Պողոս Ապուրյան... Անցավ քու վախտը... Հետ  
չի դա... Հալբաթ կոմունումն ել ապրել կեղնի մենակ...  
(հանկարծ ինչ վոր բան հիշելով) Թյու... ոսպնեմ մղեհան  
եմ երե... (գոռում է դեպի խոհանոց) Սաթիկ... Աղջի-  
Սաթիկ... Ծո՛, ի՞նչ ե, կոտորվել եք... Սաթիկ...

1 ԱՂՋԻԿ.—(դուրս է նայում խոհանոցից) Ի՞նչ ա:

ԱՊՈՒՐՅԱՆ.—Ի՞նչ ա, ինչ ա... Վաղե մե Յեվրատ քույրիկին քո-  
վը, կաթնատուն ու ըսե թող սերն ուղարկե: 5 կիլո յե,  
առ ու արի:

1 ԱՂՋԻԿ.—Բա վոր ելի հետս կոխի անի: Բա վոր չտա...

ԱՊՈՒՐՅԱՆ.—Այսինքն՝ ինչքա թե չտա: Ինչքա թե կոխի կենե...  
Համաձայն նորմի ինձ կուխնու համար պալադայացե...  
ինձ մոտ բոլորը դրած ե:

1 ԱՂՋԻԿ.—Լավ, կեթամ կասեմ (գնում է)

ԱՊՈՒՐՅԱՆ.—Հին դայդով են սովորել: Դարդակ սոխ ու սխտոր  
կուտեն... Լավ, ինտերեսնի բան չեն տեսել... Հըմը, յես  
ձեզ ցույց կուղամ: Յես ձեզ կսովորեցնեմ ողորմած հողի  
աղից ել լավ, անտիկա կերակուրներ ուտելը... Վնաս չու-  
նի, սովորիք կը: (դանակով խփում է սեղանին):

### ՏԵՍԻԼ 4

(Գալիս է Մանվել Ասլանյանը, առանց գլխարկի, քեքե վերա-  
կույով)

ՄԱՆՎԵԼ.—Բարի լույս, ուստա Պողոս:

ԱՊՈՒՐՅԱՆ.—Բարով, հարգար բարի, հընդեր Մանվել: Հը՞, դաչ-  
տի դործերն ի՞նչիս են:

ՄԱՆՎԵԼ.—(չպատասխանելով) Համոյին չե՞ս տեսել, ըստեղ չի՞  
յեկել:

ԱՊՈՒՐՅԱՆ.—Աղջիկերքն կսեն, վոր, իբրե նստած կսպասեր, ի-  
նոնք ել հուշտ են երե:

ՄԱՆՎԵԼ.—Ի՞նչ, ի՞նչ աղջիկերք: Թե վոր երեվաց, ինձ մոտ դրդի:  
Յես կանտորումն եմ: (գնում է դեպի գրասենյակ, բացում  
է դուռը և նորից վերադառնում:) Հա, եսոր ճաշին ի՞նչ  
ունես, ուստա Պողոս:

ԱՊՈՒՐՅԱՆ.—Ճաշին ինչ ունիմ: Ես սհաթիս մենյուն տամ քեզ...  
Ո՞ւր դրի (վազում է, փնտռում է սենյակում, սեղանի տակ,  
գրասենյակում) Բա ո՞ւր դրի են թերմաչը: Ահա նոր ձեռ-  
քիս եր:

ՄԱՆՎԵԼ.—Դե լավ, անդիլր ասա, տեսնեք:

ԱՊՈՒՐՅԱՆ.—Անդիլր ըսեմ: Շատ բարի: Ուրեմն առաջինը ե...  
ե...սուղ «պեյզան» ուրեմն...

ՄԱՆՎԵԼ.—(քմծիծաղով կրկնում է) Պեյզան...

ԱՊՈՒՐՅԱՆ.—Հրամանք քեզ, պեյզան: Յերկրորդն ուրեմն չնիցել  
դարնիրով ու թթույով... սուխարով-բանով, ինչիս որ  
կարգն ե:

ՄԱՆՎԵԼ.—(նույն տոնով) Շնիցել դարնիրով ու թթույով...

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—Միանգամայն խառարյալ... Յերկրորդ բլուզը...  
եւ...

**ՄԱՆՎԵԼ.**—Մի վորեւ կրեմ-մրեմ ես հնարել յերեւի:

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—(տանջանալով ջանում է հիշել, հանում է քառակը,  
վորից բնկնում է քուղի) Հը, ես է, խտեղ է, մենյուն:  
(բացում է քուղի) Յերկրորդն, ուրեմն, դեղնաշորով  
կամպոտ է պատրաստված:

**ՄԱՆՎԵԼ.**—(վերցնում է քուղի Ապուրյանից) Յես հիմի ի՞նչ ա-  
նեմ քու հետ, ուստա Պողոս... Կոմունիստ քեզ դուրս ա-  
նեմ, ձեռնառու չի... Նստիս թե կնպես, լավ վարպետ ես:  
Լավ վարպետ ես, խոսք չունիմ: Մենակ թե չեմ խմանում,  
վո՞նց անեմ, վոր դու քու եղ աղայական ցանցառությանդ  
վերջ տաս: (նայում է նաշացուցակը) Դե, են ինչ ես խելքիդ  
դու տվել: (կարդում է) «Սուղ պեղան»: Բաս չեյիք կա-  
րող ուղղակի ասել՝ մսով ու կարտոֆլով սուղ: Հետո՝  
«չնիցել»: Ուղղակի ասելիք՝ սոխով տապակած միս:

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—(զգացված) Եխ, հընդեր Մանվել: Բայց ախր ի-  
դիկ... յես...

**ՄԱՆՎԵԼ.**—(ընդհատում է) Դե ինչ ես «յես, յես»: Պիտի խմանա,  
թե վորտեղ ես ապրում: Աղաների մոտ չես: Պրոլետարիա-  
տին ես ծառայում, կոլխոզավորին, գյուղացուն:

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—(դառնալից) Բա յես վե՞ր էմ, հընդեր Մանվել: Հը-  
բը յես գյուղացի չեմ հըբը յես իդիդ չեմ հասկընա: Դու  
եւ թե՛ չնիցելը եղ սոխով միան է: Ամեն սոխով միս չնիցել  
չի եղնի: Բայց յես կկարծիմ թե վոր դեղացիք հիմի աղա-  
ների տեղն են, ուրեմն, կնշանակի, աղավարի յեւ ճաշ պի-  
տի ուտեն:

**ՄԱՆՎԵԼ.**—Եղ աղեքի մասին մոռացի: Մենք աղեք չենք: Եւ սրանից  
հետո եղ «պեղան-մեղան», «չնիցել-մնիցել» չլի: (քափա-  
հարելով ձեռքը) Ասենք, ինչ եմ խոսում քեզ հետ, մեկ ա  
բան չի դուրս դա (զննում է գրասեղանը):

## ՏԵՍԻՆ 5

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—(նրա հետևից, սեփական արժանապատվություն  
գիտակցելով) Շատ կերակայես դու քեզ հարգելի քաղա-  
քացի նախագահ: Մենակ թե հըբը խոխա յես Ապուրյանի  
հակառակ խոսելու համար: Իմ սխտեն դալը, քիչ ըմ դժար

է: (վերցնում է դանակը, սկսում է կտրատել կաղամբը)  
Բայց յես հըբա կապացուցեմ, թե ինչ կնշանակե իսկական  
չնիցելը: Ձեք սուղ, վոր ընթրիքին սոուզ պիկան մատու-  
ցեմ ձեզ: Են վախտը կճանաչեք Ապուրյանին:

1 ԱՂՋԻԿ.—(յերևալով խոհանոցից) Ուստա Պողոս...

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—Ի՞նչ է: Բերի՞ր:

1 ԱՂՋԻԿ.—Ձի տալիս: Ասում ա՝ նորման տարել-սրծել էք:

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—(դուրս է վազում սեղանի հետևից հուզված, ձեռ-  
քերը շարժում է) Հը: Ձի՞ տալիս: Հըբը եղ չեն լինիք ինչ  
կերցենք: Եղ ի՞նչըն է, որ չի տա...

1 ԱՂՋԻԿ.—(ընդհատում է) Դու եւ, ուստա Պողոս, փոխանակ ըս-  
տեղ քեզ ճղում ես, ալիքի լավ ա ինքդ գնաս մոտը:

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—Կեթամ, հըբա չեմ եթա: Կառնիմ եւ: Թե չե հարցը  
ընդհանուր ժողովում կդնեմ... (զննում է, ծիծաղելի շար-  
ժումներ անելով)

## ՏԵՍԻՆ 6

(Մի առժամանակ բեմը դատարկ է: Ապա պտղաձուլ տա-  
նող դուրից գալիս է Համո Ղարիբյանը, մի տապրակ ուսին  
և մի փոքր սընդուկ: Ղարիբյանը այս ու այն կողմն է նա-  
յում, տապրակն ու սընդուկը դնում է հատակին: Նստում  
է նստարանին: Բայց չի կարողանում նստել: Յեկնում է  
նորից նստում, նորից յեկնում է, մոտենում է պատուհա-  
նին, կանգնում է մտազբաղ: Այդ պահին խոհանոցից,  
գալելով ծիծաղը, մոտենում են Համոյին 1 և 2 աղջիկնե-  
րը, ցանկանալով կծից քուր լցնել նրա վրա):

1 ԱՂՋԻԿ.—Աղջի, կամաց...

2 ԱՂՋԻԿ.—Աձա, աձա:

(Աղջիկները չեն կարողանում գալել, մատնում են իրենց  
ծիծաղով: Համոն դառնում է: Կատակը չհաջողվեց:)

**ՀԱՄՈ.**—Աղջի, ի՞նչ եք կպել ինձանից: Ի՞նչ եք ուղում:

2 ԱՂՋԻԿ.—Մենք, վորպես վոր քու դիլխորությունը ցրելու համար  
ենք անում:

1 ԱՂՋԻԿ.—Մեղ մոռահան ես արել, ընկեր Համո, ուրիշներով ես  
տարվում:

2 ԱՂՋԻԿ.—Բարեհաճեք, ուշք դարցրեք մեզ վրա (ծիծաղ)

ՅԵՓՐԱՏ.—Ո՞ր ա են մարդակերը, իմ հողահանը...

2 ԱՂՋԻԿ.—Ուտա Պողոսը յեկավ քեզ մօտ, Յեփրատ քույրիկ:

ՅԵՓՐԱՏ.—Բա դուք ինչ եք կուխնին թողել, քրքջում եք:

ԱՂՋԻԿ.—Նրա հետ շուրուխ ենք անում (փրփկացնելով գնում են)

#### ՏԵՍԻԼ 7

ՅԵՓՐԱՏ.—Ես ընչի՞ յես վեչչեքով: Տեղ ես դնո՞ւմ:

ՀԱՄՈ.—Վոչ մի տեղ ել չեմ դնում:

ՅԵՓՐԱՏ.—Բա, ես ի՞նչ յես հավաքել:

ՀԱՄՈ.—Ընենց:

ՅԵՓՐԱՏ.—Ես վերջերս, ինչ վոր քեֆս չես բերում մեր տղա: Ի՞նչ ես սուս արել:

ՀԱՄՈ.—Բա ի՞նչ խոսեմ:

ՅԵՓՐԱՏ.—Ուրեմն խոսելու բան չունե՞ս, ելի: Եղպես, եղպես: (նստում է նստարանին և Համոյին մատով կանչում է յուր մոտ) Արի, արի ըստեղ, նստի:

ՀԱՄՈ.—Ընչի՞:

ՅԵՓՐԱՏ.—Արի, ասում եմ, նստի:

ՀԱՄՈ.—(դժվարությամբ մոտենում է, նստում նստարանի ծայրին) Դե՞:

ՅԵՓՐԱՏ.—Դե, դուքս տուր տենամ: Պարզ սրտով ասա: Ներս մի գցի, ալիկի վատ ա: Առանց են ել սող դարձանում եմ—հալ ու մաչ ես ըլի, քամվել ես:

ՀԱՄՈ.—Բան չկա, ճիշտ եմ ասում, Յեփրատ քույրիկ:

ՅԵՓՐԱՏ.—Ասա, ասա, դուքս տուր: Ձեռաց կթեթևանաս: Ի՞նչ ե, նեղացրել են քե՞ղ: Գուցե կոմունից ես անբավական:

ՀԱՄՈ.—Կոմունիցը... Զարմանալու բան ես ասում: Յես կոմունի համար գլուխս կտրել կտամ... Ուրիշ բան ա... Այ, ըստեղըս կրծում ա, ծակում ա ու չեմ կարում ինքս ինձ հավաքել:

ՅԵՓՐԱՏ.—Ի՞նչն ա ծակում, այ ախմախ:

ՀԱՄՈ.—Ե՛, գե ի՞նչ ասեմ: Յես արդեն Մանվելի հետ խոսել պրծել եմ... (կտրուկ) Հեռանում եմ կոմունից...

ՅԵՓՐԱՏ.—Ի՞նչ: (բարձրանում է նստարանից) Կոմունիցը հեռանո՞ւմ ես: Տո, դու ցնդել ես, ի՞նչ ա:

ՀԱՄՈ.—Կյանքի հանդամանքներն են ստիպում:

ՅԵՓՐԱՏ.—Եղ յե՞րբ ես կյանք տեսել, օարսաղ-գլուխ, վո՞նց ա եղ բանը գլուխդ մտել:

ՀԱՄՈ.—(յեռանդով) Բուռնադենց Լուսիկին ճանաչո՞ւմ ես, յերևի:

ՅԵՓՐԱՏ.—Ճանաչում եմ, ասա:

ՀԱՄՈ.—Ենպես ման ի դալի հետը: Ու հիմի ել յերրորդ ամիսն ա ծանրացել ա:

ՅԵՓՐԱՏ.—Ե, հետո ի՞նչ անենք վոր: Կնիկը հենց նրա համար ա, յերեխա բերի, մեծացնի:

ՀԱՄՈ.—Պետք է ամուսնանալ:

ՅԵՓՐԱՏ.—Ա՛յ, թե վո՞նց ա բանը: Ձե՞ս ուզում ամուսնանաս: Խաղ ես արել աղջկա հետ ու թողել հա՞... Ալիմե՞նտից ես վախում: Ուզում ես փախչես, հա՞:

ՀԱՄՈ.—(ընդհատում է) Ախր, Յեփրատ քույրիկ:

ՅԵՓՐԱՏ.—Ձենդ, անամոթ չուն: Կոմունարի ուրիշն մտիկ: Սրան կուսակցության մեջ են ուզում ընդունել ել... իսկ սա...

ՀԱՄՈ.—(ընդհատում է) Յաղլիլ ես, յես եղ չեմ ասում:

ՅԵՓՐԱՏ.—Փուչ կենդանի յես սրանից հետո: Հետդ խոսել չեմ ուզում: (բարձրանում է վարպետի գնա)

ՀԱՄՈ.—Ախր, բանն ալիմենտը չի: Յես սիրում եմ եղ Լուսիկին: Ընենց եմ սիրում վոր... Նրա խաթրու յա, վոր կոմունիցը ուզում եմ դուքս դամ:

ՅԵՓՐԱՏ.—(նստելով) Հիմի ել վոր սպանես, բեյնս բան չի մըտնում: Պսակվի ու ապրեք ըստեղ ձեղ համար ելի:

ՀԱՄՈ.—(դառնազի) Դե, ախր, յես հո դրան դեմը չեմ:

ՅԵՓՐԱՏ.—Ել ի՞նչ կա վոր:

ՀԱՄՈ.—Նրա հերն ու մերը թողնում չեն կոմունա դա: Դեմ են՝ ուրիշ վոչինչ: Իսկ նա ի՞նչ ա վոր. վոչ մի դարգացում չունի, հայրական կամքից չի ուզում դուքս դա: Հիմի ինչ անեմ, չեմ իմանում:

ՅԵՓՐԱՏ.—Ու հլա տղամարդ ես: Չկարեցար մի աղջիկ խելքի բերես: Թյու, թքեմ քու վրա, հա՞:

ՀԱՄՈ.—Ձեղպաներին խելքի կբերես, վոնց չե: Յես, ել դես, ել դեն: Բան դուքս չեկավ: Իսկ առանց նրան իմ կյանքը հեչ ա: (քափախարելով ձեռքը) Ե՛հ, ել հիմի հաշիվը մեկ ա: Խոհանոցում Ապուրյանի ձայնը.—«Սաթիկ, ծո, ո՞ր ե իմ ցուցակը. մե տուր աշեմ»)

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—(գալիս է) Յես ել քու հետեւն ման դուքամ, Յեփրատ քույրիկ:

**ՅԵՓՐԱՏ.**—Ի՞նչ էս ինձ ման գալի, յես հո ասեղ չեմ:

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—Յես զառափաթի գլուխ չունիմ, դործս լուրջ է: Եդ վոր եսպես ասած, որենքով է, վոր դու, հընդեր ջան, հըրաժարվում էս կաթնամթերքով մատակարարել մեր կոմունարսկի կուխնեն:

**ՅԵՓՐԱՏ.**—Ել յեդ, են հին որենքովը:

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—Այսինքն, ներեք մեր արտահայտությանը: Մենք ապուրաւորի հաշիվ կպահինք: Բարեհաճեք նկատել: (ցույց է տալիս ցուցակը) Անցյալ ամսից մնացել է 20 կիլո սեր, 7 կիլո յուղ... Համեցեք... աչե...

**ՅԵՓՐԱՏ.**—Քանի որ չես տարել, ուրեմն յուր յես գնացել, ել ի՞նչ էս խոսում:

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—Ուրեմն էս ի՞նչ բան է... Ուեկվիդից ու վոչ մի այլ է այլ... Յես գանգատ կենեմ... իրան հընդեր Մանվելին կըսեմ: Յես ընդհանուր ժողովում...

**ՅԵՓՐԱՏ.**—(ընդհատու է) Մեզ մոտ եկոմոմիս պիտի անել, ու վոչ թե ինչքան աշխատես՝ ենքան լախես: Յես պայման ունեմ Պանիր-յուղ կենտրոնի հետ... Այո... Ըստեղ կաթ... ընտեղ կաթ... վորտեղի՞ց ա եդքան կաթը... (Գրասենյակի դուռը բացվում է, գալիս է Մանվելը)

Հորից հո չեմ քաշում, կովիցն ենք կիծում:

**ՀԱՄՈ.**—(կամաց) Վորոչեւ եմ:

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—(հուզված) Յես նորմով կպահանջեմ, քուրս, յես նորմի ունեմ...

## ՏԵՍԻԼ 9

**ՄԱՆՎԵԼ.**—Բանն ինչո՞ւմն ա, ի՞նչ էք զալմաղալ անում...

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—Ինձ կուխնու համար, անցյալ ամսից, մնացորդ հասնի ընկեր Մանվել, իսկ էս անհատը, ներեցեք մեր արտահայտությանը դեմ կկայնի...

**ՅԵՓՐԱՏ.**—Դե լավ, յեկ տար: Քեզանից աղատում չկա:

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—Վոչ մի աղատում... Յես որենքով պահանջ կենեմ... (հանդիսավոր գնում դեպի խոհանոց)

**ՄԱՆՎԵԼ.**—Վաղուց պտի անեյիր... (Համոյին) Ուրեմն վո՞ւնց, վորո՞չեւ էս վերջնականապես:  
(հեռախոսի զանգ: Մանվելը մոտենում վերցնում է լսափողը)

**ՀԱՄՈ.**—Հա, յես եմ, հա... §30 ցենտներ... Շրջան ուղարկել ելելատորի համար... Չոր ցորեն ա, լավն ա, հը՞ ի՞նչ: Յուրաք տարած: Յուրաք տարածն էլ կմաքրենք... Հա... հա... կարծում եմ, վոր անցյալ տարվա վրա մի 7-ը տոկոս ավելի կլինի: Եդ կանքը... Ախր, զարգել է... Սրանից իրեք որ առաջ... Դե, եդ մինը կներես... Հա, թե վոր ըստնց ա, աչքիս վրա... Դե, ցը...  
(ՄԱՆՎԵԼԻ հեռախոսով խոսելու պահին, ՀԱՄՈՆ ուսին է գցում պայուսակը)

**ՅԵՓՐԱՏ.**—(Մանվելին) Գոնյա դու խրատեյիր սրան, հընդեր Մանվել: Ախր մեր կոմունայի պահած երեխեն ա չէ:

**ՄԱՆՎԵԼ.**—Կնշանակի դուք եք մեղավորը, չեք կարողացել մի կարգին խելքի բերեք: Յես հետը խոսել եմ: Զի ուզում: Կամքն իրենն ա... Բայց վերջին անգամ մի բան կասեմ քեզ, Համո: Տեսնում էս սա ո՞վ ա: Լենինն ա: Նրանից դու հեռանում ես:  
(Պատգա: ՀԱՄՈՆ կանգնած է գլուխը խոհարարի)

**ՀԱՄՈ.**—Ընկեր Մանվել, ախր յես դե՞մ եմ:

**ՄԱՆՎԵԼ.**—Մեզ մոտ մարդկանց արժեքը մտքերով չեն իմանում ու վոչ էլ ցանկությունով, այլ միայն նրա դործերով:

**ՅԵՓՐԱՏ.**—(մոտենում է Համոյին, պայուսակը վերցնում է ուսից Մնա մեզ մոտ, այ սարսաղ, հերիք ա... կիտումանես... Ախր են Լուսիկը թե վոր սրտով սիրում ա քեզ, ինքը կըվազի քո կուշտը... Մենակ թե դու զայիմ կաց...

**ՀԱՄՈ.**—(անվճռակամ) Եհ, ինչ արած: Բա վոր չեկալ: (նստում է նստարանին, պայուսակը վտաֆերի մոտ) Թե մնամ... Զե, կզնամ... Հաշիվը մին ա... (վերցնում է սնդուկը, գնում է դեպի դուռը)

**ՅԵՓՐԱՏ.**—Դե, դնում էս դնա... Մեր շատ պետքն ա գլուխ դնել ամեն մին փոշնքոտի հետ... Բարի ճանապարհ...

**ՀԱՄՈ.**—(անվճռակամ կանգ է առնում դռներում)  
(Մանվել հեզմորեն է նայում նրան. Յեփրատը ատելությամբ) - Եխ, մնաք բարով:

**ՄԱՆՎԵԼ** .—(Հատու, նրա յետեվից) Ախ—մախ... (դառնում ու մտնում է գրասենյակ)

## ՏԵՍԻԼ 10

**ԱՊՈՒՐՅԱՆ** .—(դուրս է գալիս խոհանոցից, ձեռքին մի ախտ, գդալով ինչ վոք բան է խառնում) Հե, հե, հե... Սերը զառաֆաթ չի... Գիտես քուրս, կըսեն՝ սիրածին հետ կսեն դժոխք կերթամ, կսեն:

**ՅԵՓՐԱՏ** .—Դե, բաթ՞ի, ըլի... տակի մասխարա: (Նույնպես գնում է գրասենյակ)

## ՎԱՐԱԳՈՒՅՐ

## ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Մարկոս Բուռնազյանի խրճիթը: Ձախում 2 քախտ նորապսակների համար: Աջում քիթեղյա վառարան: Մի դարակ ամանեղենով: Թիթեղյա լվացարան, մի քաշո: Հետի պատի մոտ վորի պատուհանները դուրս են գալիս փողոց, դրված է մի սեղան սպիտակ սփռոցով: Սեղանին սամավար, ուտելիք և համարյա քե դատարկ ողու շիշ: Սեղանի շուրջը նստած են ծեր ԲՈՒՌՆԱԶՅԱՆ ՄԱՐԿՈՍԸ, նրա կին ԱՆԹԱՌԱՄԸ և հյուր ՄԻՆԱՍ ՉԱՂԱԼՅԱՆԸ: ՀԱՄՈՆ ու ԼՈՒՍԻԿԸ նստած են հեռվում նստարանի վրա ու ծիծաղում են: Դռների մոտ, աչքի ընկնող տեղում, դրված է Համոյի սնդուկը և պայուսակը:

## ՏԵՍԻԼ 1

**ՉԱՂԱԼՅԱՆ** .—(սաստիկ խմած է) Խնամի, խնամի, ջան, մի—մի հատ ել տնդենք, հը: Ինչ կասես: Մի տես, բան—ման մնացե՞լ ա:

**ԲՈՒՌՆԱԶՅԱՆ** .—(նույնպես խմած է) Ասես դարդակ ա: (վերցնում է շիշը ու նայում) Չե, մի—մի հատ դուրս կգա: (լցնում է բաժակները) Մեկ ել խմենք հարս ու փեսի կենացը: Ի՞նչ կասես, հը, Անթառամ:

**ՉԱՂԱԼՅԱՆ** .—(յեղնում է ձեռքին բաժակ) Ձահեղներ, մի պողտի արեք, յես ձեր հոր հոգին... սիրեմ: Պողտի արեք...

**ԱՆԹԱՌԱՄ** .—Դե լավ, պաչվեցեք:

**ՀԱՄՈ** .—Դե արի, Լուսիկ ջան: (Համբուրվում են)

**ԱՆԹԱՌԱՄ** .—Ե՛հի Մինաս ջան, բա յես իմ որումը ըսկի մտածում էյի, վոր իմ մի՛նուճարին ես հանդի պտի մարդու տայի: Առանցի թող, առանցի պտակ... Բա ես հարսանիք ա... Տեք, մեղա քեզ, ես ինչ որի հասանք:

**ՉԱՂԱԼՅԱՆ** .—Ղորթ ա, խնամի, դորթ ա... Բա մենք ըսենց ինք: միող ա ողորմած հոգի հերս վոնց պսակեց ինձ: Տասն—հինգ ֆուռդոն ու ֆայտոն ժամ եր գնում: Սող գեղը քեֆ եր անում: Հարսանիքը ոխտ որ ոխտը գիշեր եր քաշում... Հաղար մանեթ նստեց իմ հարսանիքը:

**ԲՈՒՌՆԱԶՅԱՆ.**—Կարողացել աս կապիտալ դղի:

**ՉԱՂԱՅԱՆ.**—Բա հիմի ի՞նչ աս: Եթա, անիծյալ լինի բանեց կյանքը... Յերեցո անիծյալ... Յերդ ասեմք, հը... խնամի (յերգում է)

«Ձախորդ ուրերը մարդուս գլխին

Չեն մնա յերբեք»...

**ԲՈՒՌՆԱԶՅԱՆ.**—(ձայնակցում են)

**ԱՆԹԱՌԱՄ.**—(ձայնակցում են) «Վորպես ճանապարհի քարվանդուկն ու կերթան...»

**ՉԱՂԱՅԱՆ.**—(կտրելով յերգը) Իսկապես, վոր մարդ հիշում աս իմ ողորմած հոգի հորս... Գործունյա մարդ եր... Ինչքան անասուն ունեք...

**ՀԱՄՈ.**—Ուրեմն արյունարբու կուլակ աս ըլի, քանի վոր եղբան անասուն աս ունեցել ու հազարներով ել հարսանիքներ արել:

**ԲՈՒՌՆԱԶՅԱՆ.**—Ըհը, ձերն ել եղ աս ելի, բան եք սովորել՝ կուլակ աս հա կուլակ: Իսկ գեղացին հենց միշտ ել կուլակ աս յեղել, բուն բնակիչը, ի հարկե: Բան եք գցել բեյլներդ՝ կուլակ:

**ՉԱՂԱՅԱՆ.**—Այ հիմի յես, 2 կով ունեմ, յերկու ել ձի, Մեկ ել մի փոքր ջաղացի պես բան: Կուլակ ես, ասում են, խորհրդային կառավարությանը դեմ ես...

**ՀԱՄՈ.**—Քանի վոր խորհուրդների դեմ ես, պարզ բան է, կամ կուլակ ես կամ կուլակի պոչ...

**ԱՆԹԱՌԱՄ.**—Հմի յել ինչ վոր կոլտոգ-մոլխոդ են հնարել: Առանց կոլտոգ, գոհություն յերկնավորին, ապրել ենք ու կյանք ենք քաշել: (լվանում ու սրբում է ամանեղենը)

**ԲՈՒՌՆԱԶՅԱՆ.**—Ժողովուրդը շատ աս թամբալացել, երես աս առել... Աշխատել չի ուզում, աչքը տնկել է աս մաշինին... Այսինքն թե մաշինը ամեն բան կանի... Իսկ մաշինն ի՞նչ աս վոր...

**ՀԱՄՈ.**—Վո՞նց թե ինչ աս: Բա մեր կոմունումը մաշինեք վա՞ս են աշխատում: Առանց մաշին մեր ցանքսը կորած-պրծած եր հիմի:

**ԲՈՒՌՆԱԶՅԱՆ.**—Եղ վո՞ր «ձերը» չեմ իմանում, փեսա ջան, ըստեղ մեր տանը կամուն-մամուն չկա: Հալա վոր փառք իրան, հին դայդով ենք ապրում:

**ՀԱՄՈ.**—(ինքն իրեն) Հենց բանն ել եղ աս, վոր հին դայդով եք ապրում:

**ՉԱՂԱՅԱՆ.**—(յեկնում է) Մաշին: Թեք եմ յես եղ մաշինի ել ու մեքնայի վրա յել: Ըհը... Տրախորով պապա ել կվաբի... (ձեկացնում է տրախորը) Փոթ... փոթ... փոթ... Մի քիչ դես-դեն շուռ-մուռ տվեց ու յալլա... Այ դու քու մեջքով, սեփական ձեռն ու վոտով մի դես-յատին յա մի հեկտար, նորով ասած, վարի յա ցանի, ասեմ հա՛... Այ, եղ կըլի աշխատանք, իսկական, կատարյալ, դյուղացիական... Թե չե տրախոր...

**ՀԱՄՈ.**—Իսկ թե վոր բան աս քեզ տրախոր տան, յերեւի ասկաղ չանեյիր, հը:

**ԲՈՒՌՆԱԶՅԱՆ.**—Գուք ել առաջ տրախոր չինեք, հետո տվեք ու հարցրեք: (հարաբերում է) Տակեց գլխից դուրս են տալիս:

**ՀԱՄՈ.**—Երևում են, կառուցում են... Նոր դավոդներ կառուցում... մի տրախորի դավոդն արդեն պատրաստ աս...

**ՉԱՂԱՅԱՆ.**—Ե, ինձ ինչ, չինում են թող չինեն, մեկ աս սաղ կոլտոգին աս դնալու ինձ չեն տա: Ըտենց չի՞, խնամի: (մտնում է Լուսիկին, խփում է նրա ուսին) Մի վախտ ապրում եյինք հա՛... (ցույցադրում է ու յերգում) Տընդդ-տընդդ ման արի, գիշերները տուն արի... (Բուռնազյանին) խնամի, ասում եմ, զրկենք մի Չոփուռնց Մաշինի մոտ, հը, մի բոթիլ ել գա ես մեռոնիցը:

**ԲՈՒՌՆԱԶՅԱՆ.**—Չե, բռնա: Առավոտ վաղ պիտի կախելը պրծնենք քանի յեղանակը լավ աս:

**ԱՆԹԱՌԱՄ.**—Չե, լավ աս ասում, բռնա խնամի—Մինաս, պառավդ, յերեկի, նիգարան աս, թե ո՞ւր կորավ եսքան վախտը:


**ՉԱՂԱՅԱՆ.**—Քանի վոր բոլ աս, ուրեմն բռնա: (վերցնում է գրլ-խաղիք) Մնացեք բարով: (յերխատարդներին) Դե, մընաս բարով. ումանցի յես չիմացանք:

**ՀԱՄՈ.**—Ղարիբյան:

**ՉԱՂԱՅԱՆ.**—Հա, Ղարիբյան, ուրեմն ըսնց, ապրեք մեր դայդով, սովորիր... Բարի գիշեր, գեղեցիկ հիս... (համբուրում է Լուսիկին) Ապրեք, մեծերի պատիվն իմացեք... Ականջ արեք...

(ԱՆԹԱՌԱՄԸ արտապնդում է)

**ՉԱՂԱՅԱՆ.**—Եղ ի՞նչ աս, խնամի... Բան չկա, յուր կեթար: Տղեն զոչաղ աղա յա: Իսկ վոր կապիտալ չունի—եղ ել բան չկա, կվաստակի, մեկալ թե մարդ ուղի: Հալա ո՞վ աս իմանում, տեղն ընկած չէ, քեմալ ըլի: Դե արի, մի սոտլտի անենք... (ժամկույտում է)



ԱՆԹԱՌԱՄ.—Ե՛հ, յես ինչ գիտամ, վոնց պտի ըլլ՞:

ԶԱՂԱԼՅԱՆ.—Դե, բարի գիշեր, խնամի: (համբուրվում է) Հա-  
ջողություն: (գնում է դեպի դուռը)

(Զաղալյանի հետեվից դուրս եմ գալիս ԲՈՒՌՆԱԶՅԱՆՆ  
և ԱՆԹԱՌԱՄԸ)

ԱՆԹԱՌԱՄ.—(Լուսիկին) Ամանիքը տեղավորի:

## ՏԵՍԻԼ 2

(Լուսիկը մտնում է սեղանին, ափսեները տեղա-  
վորում է դարակում: ՀԱՄՈՆ նստած է լուռ, մտազբաղ:)

ԼՈՒՍԻԿ.—Ի՞նչ ա Համո, ելի քեֆդ խարար ելա՞վ:

ՀԱՄՈ.—Ձե, մենակ ես բոլորը մի տեսակ տարորինակ ա:

ԼՈՒՍԻԿ.—Ի՞նչ տարորինակ բան կա: Բոլորի պես մարդ են ելի:

ՀԱՄՈ.—Դե, վո՞նց ասեմ: Վաղուց եր յես եսպես զրույցներ չեսի  
լսել:

ԼՈՒՍԻԿ.—Դու ել Համո, հետները մի ընկնի... դործ չունես...

Մենք մի կերպ կապրենք: Հըրա վախտ ել կլի, վոր ինք-  
ներս տեր-տիրական կլենք: Երեսեք կունենանք...

ՀԱՄՈ.—Վոնց վոր յերեվում ա, պտի յոլա տանենք: Զուրն ընկնո-  
ղը, անձրեկից չի վախենա, ասում են:

ԼՈՒՍԻԿ.—Ինչի՞ վրա յես ասում եղ:

ՀԱՄՈ.—Են եմ ասում ելի, մի կերպ կապրենք:

(Դրսում մի հարբած ձայն յերգում է —

«Այ տիկի տիկի վայ տիկի տիկի տկմոր

Տկմոր ասանց քեզ յես չունեմ լավ որ»):

ԼՈՒՍԻԿ.—Եղ նա յա, Մինասը, կնչանակի տուն չի գնում, այլ են  
Մաչոյի մոտ քեֆը չարունակելու յա գնում:

ՀԱՄՈ.—Եղ կուլակը ձեզ բարեկամ ա, ի՞նչ ա,

ԼՈՒՍԻԿ.—Մորս բարեկամ ա, իսկ իմ կնքահայրը: Ուրախ մարդ  
ա... Դեստիլ-դենով յոլա յա գնում (շշուկով) Թագուն  
գարու առեվտուր ա անում... Առանց պատենտ, ի հաբ-  
կե... Համո ջան, համա մարդու բան չասես:

ՀԱՄՈ.—Պարզ ա:

## ՏԵՍԻԼ 3

(Մտնում է Անթառամ, նրա հետևից Բուռնագյան)

ԱՆԹԱՌԱՄ.—Դե, փառք ասածու ասենք հարսանիքը մի բանի  
նման չե՞ր, թեպետ խորհրդային ա, բայց ինչ վա՞ր ա, ո-  
րենքով ա:

ԲՈՒՌՆԱԶՅԱՆ.— Ծնողական պարտքներս կատարեցինք, պրծա՞լ  
գնաց:

ԱՆԹԱՌԱՄ.— Խալխի մասխարա դառանք:

ԲՈՒՌՆԱԶՅԱՆ.—(Նստում է նստարանին ու սկսում փոխլ մեջքը)

Դե լավ, հերիք ա... Տեղաչորը գցեք: Առավոտը վաղ պտի  
կալելու գնանք, փեսա ջան... Հետ ես սովորել, յերեկ:

(Անթառամը և Լուսիկը անկողին են գցում)

ՀԱՄՈ.— Ասենք, մի 3 տարի կլինի, վոր չեմ կալսել: Ախր մեզ  
մոտ կալիչով եր բոլորը:

ԲՈՒՌՆԱԶ.— Մարդ ուզենա, սովորելը դժվար չի:

ՀԱՄՈ.— Ինչ մի առանձին ուզենալու բան ա վոր, ձեռքով թափա-  
հարելը:

ԲՈՒՌՆԱԶ.— Գյուղացու բանն եպես ա—ուզես, չուզես՝ պիտի  
թափահարես:

ԱՆԹԱՌԱՄ.— Մեզ համար ժամանակ չկա: Արևը ծագելուց մինչև  
մթնելը բանում ենք:

ՀԱՄՈ.— Ե, ի՞նչ ոգուտ:

ԲՈՒՌՆԱԶ.— Վո՞նց թե ինչ ոգուտ: Վոր ոգուտ չըլեր են ա ուտե-  
լու բան ել չե՞ր ըլի:

ՀԱՄՈ.— Եղ դեռ հարցական ա: Մենք հեկտարից 15 ցենաներ ենք  
հափաքել ես տարի: Իսկ դուք, յերեկ, սխառ-ութը...

ԼՈՒՍԻԿ.— Պառկեք քնեք: Բոլա խոսեք:

ՀԱՄՈ.— Դու հրա կաց: Եխ, հայրիկ, դու մի հուսահատվիր:  
Մենք միասին ենպես գործեր կանենք, վոր... Անպայման  
կոլխոզ կկառուցենք... Սաղ գեղը չուռ կտանք:

ԱՆԹԱՌԱՄ.— Ձե ախպետ, ել հերիք ա... Առանց են ել չուռ ենք  
եկել: Զարդ ու փշուր ենք ըլի: Մենք մեր գործիցը չենք  
կարում գլուխ հանենք: Ցախն անտառից տուն չենք կրել:  
Մառանի կտուրը չենք ծածկել:

ՀԱՄՈ.— Մարդ վոչ թե միմակ իրա մասին պտի մտածի, այլ և  
հասարակական գործերի մասին:

ԲՈՒՌՆԱԶ.— Թող ուրիշները մտածեն... Ի՞նչ ես տակից գլխից  
դուրս տալիս: Վեր կացեք պառկեք: Լույսը հանգցրեք:  
Նավթը հեշտ չի ճարվում: (Մտնում է վառարանին)  
(Համոն նայում է նրա հետևից)

ԱՆԹԱՌԱՄ.— (Մտնում է սեղանին և ուզում է հանգցնել լույ-  
սը) փչեմ, թե չե՞:

ԼՈՒՍԻԿ.— Թող մնա, մայրիկ, յես ինքս կփչեմ:

ԱՆԹԱՌԱՄ.— Դե լավ: (Անցնում է կողմ, իր անկողնու մոտ, խա-

չակնաբեր և) Փառք քեզ տեր, դու մեզ ազատեցիր փոր-  
ձանքից: (Հորանցում ե և մտնում ե յուր անկողինը) Ե...  
եխ... Հըլա ուզում են առանց ասածու սողրեն, մեղա քեզ,  
մեղա քեզ, տեր...:

ԼՈՒՍԻԿ.—(Շշուկով) Դու ել Համո, հենց մի անգամից յախա-  
բողաղ ես ըլում հետները:

ՀԱՄՈ.—Դե, յես ի՞նչ ասի վոր:

ԼՈՒՍԻԿ.—Ինչ ուզում ա ըլի, հերս ու մերս նեղանում են: Պա-  
ռավ մարդիկ են, մեղք են:

ՀԱՄՈ.—Ուրեն ի՞նչ ա, հմի յես պտի բերանս կողպեմ ու նստե՞մ:  
Նրանց զուռնով պտի պարեմ: Դրան յես սովոր չեմ:

ԼՈՒՍԻԿ.—Շատ ե՛ք սովոր չես: Դու թախտին պառկի: Փչում եմ  
լույսը:

ՀԱՄՈ.—Հանգցրու:

(Լուսիկը մարում ե լամպը և պառկում

Համոն մքուք-շամ մեջ հանում ե շապիկը):

ՀԱՄՈ.—Լուսիկ, բայց շատ տարորինակ են ապրում մարդիկ: Ես  
ի՞նչ խրճիթներ են, հավարուն ա ելի, իրանց համար սար-  
քել են:

ԼՈՒՍԻԿ.—Ձեմ իմանում, ինչ տարորինակ բան կա: Դե լավ քնի,  
առավոտը՝ շուտ պտի վեր կենանք:

ՀԱՄՈ.—Լավ, բարե գիշեր:

(Յկեղեցու գանգը գարնում ե 12 ժամը:

Աֆաղաղների կանչը: Ծերունիների անկողնուց  
լսվում ե խոսիքը)

ՀԱՄՈ.—Այ, ես մեր կոմունումն ա սահաթի 12 նա խոխում ե՛խ...

ԲՈՒՌՆԱԶ.—(քավ ձայնով խոռացնում ե) Ախ՛ու... խո՛ւ...

ԱՆԹԱՌԱՄ.—(զիվ ձայնով, քեքս շվիտցով) Ա-փու-փո՛ւ... փչ՛չ  
...փչ՛չ... Ա. փչ՛չ...

ԲՈՒՌՆԱԶ.—Ա...խո՛ւ... ա...փո՛ւ... սողո՛ւ... լծի՛... լծի՛...

ԱՆԹԱՌԱՄ.—Փչչ...քչչ...ճյու...ճյու...Ֆյու...Ֆյու...փլխ...փլխ...

ՀԱՄՈ.—(Շուռ ե գալիս, քախտը ցնկում ե) Այ թե խոռացնում  
ենք են, հա՛...

ԼՈՒՍԻԿ.—Ի՞նչ ես չուռ ու մուռ դալի:

ՀԱՄՈ.—Գուհո չի տանում, չեմ իմանում:

ԲՈՒՌՆԱԶ.—Ա... խոռ...խոռ...ուռ...Սոսյ...Նաղաղ...

ԼՈՒՍԻԿ.—Տալ արա ու քնի:

ՀԱՄՈ.—Փորձում եմ:

ԱՆԹԱՌԱՄ.—Փչչ...չչ...Ֆյու...Ֆյու...Ֆյու...

ՀԱՄՈ.—Եղ ինչիցն ա, վոր քուհը չի տանում:

ՀԱՄՈ.—Յկեղեի սովոր չեմ, դրանից ա: Ոթախից ել ինչ վոր չնա-  
հոտ ա դալիս: Ողբ շատ ա ծանդր:

ԼՈՒՍԻԿ.—Բա յես հոտ չեմ առնում:

ՀԱՄՈ.—Ես ի՞նչ ա, կատու յա՞:

(Ինչ վար մոտիկում կատուն մլավում ե)

ԼՈՒՍԻԿ.—Կատու յե, բա հո չուռ չի: Լավ, քնի:

ԲՈՒՌՆԱԶ.—Ախ...խո...Ա...Ֆու...:

ՀԱՄՈ.—(կտրուկ շուռ ե գալիս, այնպես վոր քախտը ցնկում ե)  
Վա՛յ, ես ի՞նչ եր:

ԼՈՒՍԻԿ.—Հ՞ը, ինչ եր:

ՀԱՄՈ.—Կծեց...

ԼՈՒՍԻԿ.—Ո՞վ կծեց:

ՀԱՄՈ.—Թախտաբիթի յա, ինչ ա:

ԼՈՒՍԻԿ.—Թախտաբիթի: Եղ ի՞նչ թախտաբիթի յա:

ՀԱՄՈ.—Ի՞նչ թախտաբիթի յա, ի՞նչ թախտաբիթի յա: Սովորա-  
կան: Թախտաբիթին ի՞նչ տեսակ ա ըլում:

ԼՈՒՍԻԿ.—Ես վորդեմն կարող ա ըլի: Մեր տանը թախտաբիթի  
չկար:

ՀԱՄՈ.—Ելեկտրիկին մի վառես:

ԼՈՒՍԻԿ.—Ի՞նչը:

ՀԱՄՈ.—Ելեքտրականն, ասում եմ:

ԼՈՒՍԻԿ.—Բա մեզ վորդեմնա, մերը լամպա ա:

ՀԱՄՈ.—Թյու...մոռացել ելի: Սպիչկես վորդի յա: Զերումն ա  
յերեխ... (լուցկու տուփը շարժում ե):

ԼՈՒՍԻԿ.—Բալբի դու յես հեռը բերել:

ՀԱՄՈ.—Ի՞նչ ես ասում: Մեր կոմունումը թախտաբիթի վորդի-  
յանա: Մեղ մոտ մաքրություն ա: Ամեն տասը որը մեկ  
դոշակները դուրս ենք ածում (վառում ե լուցկին) Վա՛...  
սաղ տեղերս լիքն են... մորեխի դալդի հավաքվել են:

ԼՈՒՍԻԿ.—Ի յա:

ՀԱՄՈ.—Բա «իյա» յե... վո՞նց ել ապրում եք ու չեք դդում:

ԼՈՒՍԻԿ.—Եղ դու նոր ես, դրանից ա, մենք սովոր ենք:

ՀԱՄՈ.—Լավ սովորություն ա, ինչ անեմ: Լամպն ո՞ւր ա:

ԼՈՒՍԻԿ.—Ստույի վրա յա: Կամաց...չուչեն չկոտրես...լավ կանե-  
յիր՝ քնեյիր:

ՀԱՄՈ.—(քոքիկ վոտֆերով, մոտենում ե սեղանին, վերցնում ե  
լամպը, հանում ե ապակին, վառում ե) Լավ կանեյիր քը-

նեյիւր : ի՞նչ , յես անդգա անասուն եմ : Ինչ ես անտերը պտի  
լաւիի ու յես ել պտի քնե՞մ :

ԼՈՒՍԻԿ .— Շատ են յերես տվել ձեզ , ձեր կոմունումը : (յիմում  
ե , շորը գցում ե վրան) Ուզում ես ստուլին դցե՞մ տեղա-  
շորդ... (վորցնում ե քախտից անկողինը և գցում ե սե-  
ղանին) Մենք հասարակ ենք ապրում , գյուղացու դայդի :

ՀԱՄՈ .— Սա հասարակ չի , այլ խողովարի յա : (վտր դիպչում ե  
նստարանին և շուռ գալիս)

ԱՆԹԱՌԱՄ .— Ֆյու... ֆյու... (աղմուկից վեր ե ցատկում) Պա-  
ժա՞ն ա , երվո՞ւմ ենք

ԲՈՒՌՆԱԶՅԱՆ .— Հ՞ը , ի՞նչ ա , վորտե՞ղ ա :

ԼՈՒՍԻԿ .— Քնեք , քնեք : Բան չկա :

ԲՈՒՌՆԱԶ .— Եդ ինչա , ինչի՞ չեք քնում :

ԼՈՒՍԻԿ .— Քունը չի տանում , թախտաբիթիքը կծում են :

ԲՈՒՌՆԱԶ .— Եդ ի՞նչ թախտաբիթի յա... Բա մեղ խի՞ չի կծում :  
Դուք չեք քնում , խախին ել քնահարամ եք անում :

ԱՆԹԱՌԱՄ .— Աղեքը բարով եկան : Թախտաբիթին չի թողնում  
քնեն :

ԲՈՒՌՆԱԶ .— Ըստեղ թախտաբիթի-մախտաբիթի չկա... Փչի ճը-  
րազը , Լաւիկ : Թախտաբիթի :

ՀԱՄՈ .— Մի քիչ կամաց , քաղաքացի : Քաղաքավարի կաց , առա-  
ջին գիշերն ա...

ԲՈՒՌՆԱԶ .— Այսինքն , վո՞նց թե քաղաքավարի ...

ՀԱՄՈ .— Հենց ընենց : Մի անգամից մի չանց առ քեզ :

ԼՈՒՍԻԿ .— (Համոյին) Դե լավ , դու յեղ : Ի սեր աստծու , սուս  
արա... Մի վիճի հետը...

ԲՈՒՌՆԱԶ .— (քեմ ե մտնում սպիտակեղեմով) Ո՞վ ա ես տան  
տերը :

ԼՈՒՍԻԿ .— Քնիւր , հայրիկ... Առաջին օրն ա ու արդեն կռիվ եք  
անում :

ԲՈՒՌՆԱԶ .— Մեզ խրատել պետքը չի : Մենք բան-ման հասկա-  
նում ենք : Շահադիս տես... թախտաբիթիքը կծոտում  
են : Աղջի փչի լուսը , գեղամեջում նավթ չկա :

ՀԱՄՈ .— Ա՛յ , թե ընկա հա... խկապես , վոր խրվեցի...

ԼՈՒՍԻԿ .— (շշուկով) Դե լավ , դու ել սուս արա (փչում ե լույս  
ու պառկում : Լուր-քյուն) :

ԱՆԹԱՌԱՄ .— (կողացնում ե սկզբում կանաց , հետո ուժեղ) Ահու-  
...ու Ահու...

ԲՈՒՌՆԱԶ .— (նրա հետևից) Ախու... ո... խոտոտու... խոտո...  
Դուսը լուսանում ե : Յերևում ե , ինչպես սեղանի  
վրա կծկված , քնած ե Համոն : Հովիվը փչում ե շվին

ՎԱՐԱԳՈՒՅՐ

## ՅԵՐՐՈՐԿ ՊԱՏԿԵՐ

Անցել է 7 ամիս: Նույն խրճիթը, նույն կահավորումով: Մե-  
նակ մի փոփոխություն կա. դա Լուսիկը քալստի մոտ յերեսայի  
որրորդն է: Լուսիկը նստած է քալստին, որորում է որորոցը: Ծընկ-  
ներին ինչ վոր գիրք կա: Անքատամը գուլպա է գործում: Յերեկո  
յէ:

### ՏԵՍԻԼ 1

ԱՆԹԱՌԱՄ. — (տալտկալի ձգվող ձայնով) Ես ա, ութ ամիս ա ինչ  
ես տունն ա մաեւ ու ելի խորթ ա ու խորթ: Ռեխը ա՛նից  
չուռ ա տալի: (պաուզա) Հարազատ աղջիկս եւ, ի՞նչ ա-  
նեմ, լավ ա... Հորն ու մոր վարցիկը տվեց... Պահել, մե-  
ծացրել ե՛նք... Լուսիկ ջան, ես ըսենց, Լուսիկ ջան ես ը-  
նենց... Ու բոլորը դուր... (նայում է Լուսիկին, քե ինչ  
տալտկալություն է գործում իր ասածը) Հմի եւ բաժանվել  
են ուղում... Կոլխոզ են գրվում... Վերջի կովն եւ տուր,  
թող տանեն... Փայ պտի տան... Ո՞վ ա դուռով կոլխոզ  
քաշում ձեզ... Առաջ մի եղ փայը ձեր հալալ քրտինքով  
վաստակեք, նոր կոլխոզ-մոլխոզ հնարեք: Թե չե համե-  
ցեք... Հերը սաղ կյանքը մէջքը ծռել ա, տուն ու տեղ ա  
գրել... ու հիմի եւ վեկալ տուր ես անբաններին, տանեն  
կոլխոզի փայը տան, են եւ վերջին կովը... (պաուզա)  
Վոչ մի պատիվ, վոչ մի ոգուտ... Ուրիշ փեսա ինքը կա-  
սեր, թե յես ջահել եմ, քեզանից, թող միսը յես տանեմ  
ծախեմ... Հըլա վախ եւ ա, ասում են իրա սեփական անա-  
սունը ծախելուց բռնում են... Կտաներ կծախեր ու փողը  
կերեր կտար կասեր՝ ա՛ռ, վեկալ... Այ ըսենց ինք ապ-  
րում առաջ իսկ նա աղնիվ ա, ըսենց բան չի անի...  
որենքով չի, զակոնով չի: Դարդակ ու տկոթ տունս  
ա մտել ու հըլա ըսենց խոսքեր է ասում հանո-  
րը... (նայում է Լուսիկին, տեսնելով, վոր մըք-

մըքալը չի հասնում, վեր է կենում, կանգնում է  
Լուսիկի դեմը ու ասում է խիտ, կատաղությամբ)  
Սրիկա յա քու մարդը, թալանչի յա, չուն-ավա-  
ղակ ա, անաղ ու հաց չուն ա սաղ գեղը նրա խաթրու  
ծուռ ա մտիկ անում մեղ, խալիսի մասխարան ենք դառել:  
ԼՈՒՍԻԿ. — (վերջապես պայքում է) Դե, ձեռք քաշի ա մեր, հողիս  
հանեցիր ելի, առավոտից մինչև գիշեր, չաչանակի պես  
վրա յես տալի, դե հերիք ա ելի:

ԱՆԹԱՌԱՄ. — Դուր չի գալի, հա՞... Դուզ խոսողի աչքը քոռ ա,  
հա՞...

ԼՈՒՍԻԿ. — Ո՞ւր ա քու դուզ խոսքը: Ի՞նչ ա, յես չե՞մ աշխատում,  
սաղ կյանքս չե՞մ աշխատել: Յես ես տան մեջ իմ փայն  
ունեմ ու որենքով ել ինձ հասնում ա: Դե, ուրեմն, բալա  
խոսես...

ԱՆԹԱՌԱՄ. — Աշխատում եք, տեսնում ենք, փորց եք աշխատում:  
Ձեր դործը ժողով անելն է ու գիրք կարդալը:

ԼՈՒՍԻԿ. — Պետութունը հրամայում ա անասունը պահել, վոր  
դարգանա, վոր դարդակ ձեռով կոլխոզ չեթանք: Իսկ  
հայրիկն ի՞նչ ա ասել... Իմ կովը մորթել ա... Ասես յես  
խորթ եմ, ձեր աղջիկը չեմ: Ի՞նչ ա, բաժինք չատ եք  
տվե՞լ:

ԱՆԹԱՌԱՄ. — Ջահել ես հըլա, հորդ խրատ տալու համար... Վեր-  
ջի կովը տուր տանի կոլխոզ... Մի թալանչու մեկը յեկել  
ա, տեր ա կաղնի մեր ունեցածին... ու աղջիկն եւ նրա  
յետիցն ա գնում... Հոր ու մոր դեմ են գնում:

ԼՈՒՍԻԿ. — Այ ես ա կեթանք... վոնց վոր ուղում եք, մենակ ապ-  
րեք, ձեզ խանդարող չկա:

ԱՆԹԱՌԱՄ. — Տուն քանդելը հեշտ ա... Ծինեին ա դժվար. փող  
վաստակելը հեշտ չի (հառաչում է) Ախր, այ ախմախներ,  
ձեր լավն ենք ուղում... Եսոր եքուց մեռնենք, բոլորը  
սարքած-կարդած ձեզ ա հասնելու, չե՞:

ԼՈՒՍԻԿ. — Ձեր ունեցածը մեզ պետք չի:  
(Դրսում հաչում է շունկ, դռան չխկոցց Մարդ ա գալի,  
Համոն ա: (ախանջ է դնում):

ԱՆԹԱՌԱՄ. — Եսոր չուտ ա պրծել ժողովը, յերեւի... Ախ, ախ,  
ախ... (վեր է կենում) Այուրը պտի մարդիկ, ու խմոր ան-  
վի... (հարակցում է) Մեղա քեղ տեր, մեղա քեզ... (մա-

տեմում է անկյունին, վորտեղ դրված է քաշտը, ալյուրք, մաղը և այլն) :

## ՏԵՍԻՒ 2

(ՀԱՄՈՆ մտնում է մաշյլ, հոնքերը կիտած)

ԼՈՒՍԻԿ.—Ես ի՞նչ եմ չուտ եկել, Համո :

(ՀԱՄՈՆ լուռ է, գլխարկը կախում է պատի մեխից)

ԱՆԹԱՌԱՄ.—Շատ կուլակ ես փետուհան ա՛րել, փեսա ջան. քանի՞ մարդու տուն ես քանդել եսոր, պատմի տենանք :

ԼՈՒՍԻԿ.—Մարիկ :

(ՀԱՄՈՆ լուռ է)

ԱՆԹԱՌԱՄ.—Ի՞նչ մարիկ : Յես դորթ եմ ասում ու մարդից ել ա չեմ վախում... Սրա խելքում տաղ ել կուլակ են ու արմախ... մենակ ինքն ա գիտուն :

ՀԱՄՈ.—Բու մարդուն են թևաթափ արել... քաղաքացի Բուռնաղյան... Ընենց են հուպ տվել, վոր քեֆդ դա :

ԱՆԹԱՌԱՄ.—(մտմը ձեռքին, տաշտը փոքին գնում է դեպի դուռը) Սրտիդ ուզածն արիր, ելի, ավաղակ, փեղա քեզ տեր, յերանի մեռնիմ, մեռնիմ, ու ես որերը չտենամ : Տեր տա՛ված :

(ՀԱՄՈՆ ատելութամբ նայում է նրան)

Ի՞նչ ես աչկդ տնկել վրես, մայրերիստ, կո՛ւլ ես տալու ինձ...

ԼՈՒՍԻԿ.—(ձեռքը ձեռքին խփելով) Մայրիկ, դե հերիք ա յե :

ԱՆԹԱՌԱՄ.—Թյու ձեզ, հա՛ :

ՀԱՄՈ.—Ձիլ խասիաթ ունի պատալը... իստակ ջաղույա :

ԼՈՒՍԻԿ.—Գոնյա դու սուս անելիր, Համո, սա հո կյանք չի...

Յերանի մի տեղ ըլեր... մարդ գլուխն առնել ու կորչեր :

ՀԱՄՈ.—(լուռ փայլում է սեկյակում. ինքն իրեն) Եղպես, եղպես... (մտնում է դուռը, բացում է յերեսի շորը ու նայում է յերեսիստին)

ԼՈՒՍԻԿ.—Քեզ ի՞նչ ա պատահել... Համո, մի բան ա պատահե՞լ :

ՀԱՄՈ.—(դանդաղ դառնում է դեպի նա) Այո, պատահել է :

ԼՈՒՍԻԿ.—(մտնում է նրան) Ի՞նչ բան ա, Համո :

ՀԱՄՈ.—(բռնում է նրա ուսերից) Պատահել է, Լուսիկ... Ձեր ել կարող չպատահել :

ԼՈՒՍԻԿ.—Դե չուտ արա, ասա :

ՀԱՄՈ.—Պա՛հ հեռանա՛նք ստեղծ... Գուցե եղբայր եմ հեռանա՛նք :

ԼՈՒՍԻԿ.—Բա ո՛ւր, Համո ջան :

ՀԱՄՈ.—Հրես... (քուլք է հանում գրպանից) 25 տնտեսություն ա գրվել կոլխոզում... Ես բոլորը 40 տնից :

ԼՈՒՍԻԿ.—Բա փնացածներն ո՛ւր են...

ՀԱՄՈ.—Այլ եր, դիմում տվին, վոր ուզում են դուրս գալ... Իմ սիրելի աները, քո թանգազին հերը, են Չաղալյանի հետ դործ են տեսել... Ենենց մի պրապաղանդ արին վոր, ել ի՞նչ ասեմ... Իսկ իմ մասին, ել ինչ ասես, վոր չասին, ել դող, ել հարբեցող, ել եսպես ու ենպես...

ԼՈՒՍԻԿ.—Ի՞նչ ես ասում, Համո :

ՀԱՄՈ.—Ել ինչ արած... Տեսա, վոր ամեն բան տակն ու վրա յա լինում : Սմբաթենց Գեղամին, գիտե՞ս չե, ինչ համոզված մարդ ա, բայց նրան ել են չուտ տալի...

ԼՈՒՍԻԿ.—Հե՛տո, հե՛տո...

ՀԱՄՈ.—Ել ի՞նչ պա՛հ անելի : Թքեցի ամեն բանի վրա Լուսիկ ջան, ես բնտանեկան սեկրետները վրա ու սկսեցի ամեն բան չիմ-չխտակ ասել :

ԼՈՒՍԻԿ.—Յանի իսկապես ասի՞ր :

ՀԱՄՈ.—Պա՛հ ասելի, Լուսիկ, պա՛ղար ա, ուրեմն թող պա՛ղար ըլի : Են ել ասի, վոր հողում թաղած 100 փութ ցորեն ունի հերդ, վոր կովը մորթել ու ծախել ա : Են ել, վոր Չաղալյանին քյոմադ եր անում դաղտնի առուտուրի մեջ :

ԼՈՒՍԻԿ.—Ես ի՞նչ արինք, Համո... Հերս կանիծի մեղ...

ՀԱՄՈ.—Թող չխանդարի մեղ, թող մեր ճամբեն չկտրի, թող կուլակները թայ չընկնի :

ԼՈՒՍԻԿ.—Հմի ի՞նչ կանեն նրան...

ՀԱՄՈ.—Արձանագրություն կաղմեցին դյուլխորհուրդում : Ես եր մենակ... Հուպ կտան հալեորին... Շտրաֆ կանեն, յերեկ... հացը կառնեն ձեռիցը : Իսկ քաղնորդ, յերեկ, կքեն ըստեղարենքից...

ԼՈՒՍԻԿ.—(նստաբանին նստելով) Ել հիմի չի կարա ըստեղարել...

ՀԱՄՈ.—Ու յերը վոր ամեն բան լուս աշխարհ հանեցի, գեղացիք սկսեցին տատանվել... Տասը մարդ նորից վերադարձան կոլեկտիվ : Բայց հմի դրա փոխարեն, են տեսակ կորիդ ունենք, վոր ինչ ասես կանես, կարելի յա նույնիսկ կա-

մունա մտնել... Մենակ թե հիմի վոչ անասուն ունենք,  
վոչ փող ու վոչ էլ ինվենտար... Բիրադի յեւ չքավոր են:  
**ԼՈՒՍԻԿ** — Բա հմի մենք ո՞ւր պտի դնանք, Համո ջան, մինչև  
տաքերն ընկնեն էլ հլա 2 ամիս կա: Նորից դրա կոմունը  
դնանք, եղ էլ դու չես ուզի:

**ՀԱՄՈ** — Ձե, չե, յես կամունը եւ չեմ դնա... Ամսից չեմ դնա...  
Յես վո՞նց կարամ էլ յեղ դնամ կամունը... Նրանք ինձ  
հարազատ զավակի պես եյին պահում, իսկ յես են ամե-  
նաաք վախտը, դեղերդիր դատա ու փախա... Յես նը-  
րանց առաջ մեղավոր եմ... սրկալություն եմ արել...  
Ձե, չե...

**ԼՈՒՍԻԿ** — Բա հմի վո՞նց պտի անենք:

**ՀԱՄՈ** — Մի կերպ կանենք, Լուսիկ ջան... Մի տեղ կտեղավոր-  
վենք... դադարի բան ա (հայլում ե) Իսկ հալեորի բանը  
բուրդ կլի: Նա կազմուեման ամուր ա... Չնայած մեջը  
փաած ա, բայց կենալը երկաթի պես զայիմ ա... Դժար ա  
կտարելը:

### ՏԵՍԻԼ 3

Մտնում ե ծեր Բուռնագյանը. այն ժամանակ, յերբ  
Համոն կանգնել ե սեղանի մոտ մեջքով դեպի դուռը,  
ծերուկը հանվում ե չնայելով վոչ փեսային, վոչ էլ  
աղջկանը: Պահ մի սպասում ե, ապա հանդիսավոր մոտե-  
նում ե Համոյին և խորը գլուխ ե տալիս նրան:

**ԲՈՒՌՆԱԳ** — Ծնորհակալ եմ, թանկազին հընդեր: Բարկամու-  
թյուն արիր, ծերությանս հասակում:

(Համոն կտրուկ դառնում է և հանգիստ ակնապիշ նայում ե  
Բուռնագյանին)

Ծնորհակալ եմ, փեսա ջան...

(Լուսիկը անհանգստացած մոտենում է)

Քեզանի յեւ, աղջիկս, շատ չնորհակալ եմ, վոր ես Հու-  
դաին տունս ես ընդունել (գլուխ ե տալիս և Լուսիկին)

**ԼՈՒՍԻԿ** — Հայրիկ, ի՞նչ ես ասում:

**ԲՈՒՌՆԱԳ** — Ձենդ, ավաղակներ, գաղաճաններ...

**ՀԱՄՈ** — Մի դոռա, գիննաանը չես:

**ԲՈՒՌՆԱԳ** — Ձենդ, լակոս:

(Անքառամը գալիս ե տաշտը ձեռին)

Մորթեց... մորթեց... ինձ անդանալ մորթեց...

### ՏԵՍԻԼ 4

**ԱՆԹԱՌԱՄ** — (մոտենում ե Բուռնագյանին) Ի՞նչ ա ըլե, այ հա-  
լեվոր:

**ԲՈՒՌՆԱԳ** — (վտար գետին ե գարկում և պառավի վրա) Մուս...  
ձենդ...

**ԼՈՒՍԻԿ** — (ընկնում ե դեպի հայրը) Հայրիկ, ապեր...

**ԲՈՒՌՆԱԳ** — (հրում ե Լուսիկին) Հեռացի:

**ԱՆԹԱՌԱՄ** — (արագորեն քաշտը դնում ե հատակին) Եղ ի՞նչ ա,  
կի լակել ես... վալ իմ գլխին...

**ԲՈՒՌՆԱԳ** — (Անքառամին) Բա հացդ ո՞ւր ա: Կովդ ո՞ւր ա:

**ԱՆԹԱՌԱՄ** — Ի՞նչ հաց:

**ԲՈՒՌՆԱԳ** — 15 մեշուկ... Սա (մատնացույց Համոյին) լալեց,  
կուլ ալեց... Ժողովում մատնեց... բալորն ասեց...

**ԱՆԹԱՌԱՄ** — (նշում ե) Վա՛յ ինձ:

**ԲՈՒՌՆԱԳ** — Անունս էլ կեքեց կուլակի պոչ:

**ԼՈՒՍԻԿ** — Ախր դու ես մեղավոր, դու նրան հասցրիր եղտեղ...  
Նա քու լավն եր ուզում:

**ՀԱՄՈ** — Դու Չաղալյանի զուռնով ես պար դալի... պետության  
փնտաարար ես:

**ԱՆԹԱՌԱՄ** — (հարձակվում ե գրդնակով Համոյի վրա) Մի ես  
թալանչուն տես ե՞...

**ՀԱՄՈ** — (բռնում ե գրդնակի ծայրը) Մի քիչ կամաց, պառավ...

**ԲՈՒՌՆԱԳ** — (պատառոտում ե յուր վրայի խալաքը վարից վեր)  
Գող... ավաղակ... Ես էլ առ... Բոլորը առ... Մաղ ել  
քոնն ա... առ... (շարտում ե նրա վրա պատառոտածը)

**ԱՆԹԱՌԱՄ** — (վռնում ե, դրդնակը վայր չդնելով) Ղարաուլ...

**ԼՈՒՍԻԿ** — (վագում ե հոր ու մոր շուրջը) Հայրիկ... մայրիկ...

**ՀԱՄՈ** — (խլում ե դրդնակը, ծնկան խփելով ջարդում ե, կտորնե-  
րը դնե ե շարտում) Քավթառ...

**ԱՆԹԱՌԱՄ** — Վա՛յ... վա՛յ...

**ԲՈՒՌՆԱԳ** — Ուրեմն, ըտենց էլի... (հարձակվում ե Համոյի  
վրա. կռիվ ե)

**ԱՆԹԱՌԱՄ** — (Պագել ե ու վտնում ե) Ամա՛ն, հասե՛ք:

ՀԱՄՈՒՆ — Հետ քաշվի... ձեռք թող... մի կծի...

ԲՈՒՌՆԱԶ — (փնչացնում ու խռոցնում ե) Շան սատակ կանեմ:

ԼՈՒՍԻԿ — (տարածելով ձեռքերը) Այ ձեզ մատաղ, ես ինչ բանի  
յեք, այ հեր, այ մեր: Ի՞նչ եք անում: (ուզում է բաժա-  
նել նրանից Համային)

ՀԱՄՈՒՆ — (Կուրս է պրծնում Բուռնագյանի ձեռքից և վազում է  
դեպի նստարանը) Չմոռենաս, վերջը վատ կլուի:

ԼՈՒՍԻԿ — Ուշքի չեկեք, ինչ բանի յեք:

ԲՈՒՌՆԱԶ — (կատաղուրդունից լսելիք կորցնելով) Շան սատակ  
կանեմ... (վառարանի մոտ ընկած մի փայտ է վերցնում  
ու նորից հարձակվում Համայի վրա) Ու... ո՞ւր...  
յես քու...

(Լուսիկը կախվում է հորից: Համոն բռնում է նրա  
կոկորդից: ԲՈՒՌՆԱԶՅԱՆԸ վայր է գցում փայտը: ՅԵՐ-  
ԿՈՒՍՈՎ ընկնում էն քախտին: ՀԱՄՈՒՆ ծերունիին դը-  
նում է տակին):

ԱՆԹԱՆԱՄ — (ցատկում է) Սպանեց... վերջացավ...

ՀԱՄՈՒՆ — (հեռանում է ծերունիից. շփում է յուր բուռնները. դան-  
դաղ մոտենում է պատի մեխին, վերցնում է յուր գլխար-  
կը ու գնում է դեպի դուռը)

ԱՆԹԱՆԱՄ — (լսելով ընկնում է ծերունու քախտի վրա)

ԼՈՒՍԻԿ — Համո, բա ո՞ւր ես գնում: Յերեխիդ խնայիր,  
ախր ե...

(Ծերունու վեր է կենում և կիսախեղագարի պես  
նստում է անկողնու վրա):

ՀԱՄՈՒՆ — (ծերունու կողմը) Սաղացա՞ր:

ԼՈՒՍԻԿ — (կտրում է նրա նամբեն) Համո:

ՀԱՄՈՒՆ — (հեռացնելով կնոջը դռնից) Թող... (զնում է)

#### ՎԱՐԱԳՈՒՅՐ

#### ԶՈՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

(Փռփրիկ, կիսախավար աղոտ նրագով լուսավորված գի-  
նեվանառ, Զոփուռենց Մաշոյի խրհիթը: Խրհիթում, սեղա-  
նի մոտ խմում են. ԶԱՂԱՂՅԱՆԸ, ԱՊՈՒՐՅԱՆՆ ՈՒԶՈՓՈՒ-  
ՌԵՆՑ ՄԱՇՈՆ: Նրանցից քիչ հեռու նստած է կույր շվի փը-  
չողը: ԱՊՈՒՐՅԱՆԸ հագին պինջակ ունի վորի տակից յերե-  
վում է խոհարարի սպիտակ խավաթը: Բաժակը ձեռքին, Ա-  
ՊՈՒՐՅԱՆԸ կանգնած նառ է ասում: Շվին մեղմ փչում է):

#### ՏԵՍԻԼ 1.

ԱՊՈՒՐՅԱՆ — Դուք վե՞ր էք որ: Հե՛չ: Աբրազովանին ին՞չ է որ,  
հե՛չ: Եդ ել չունիք: Մենյատնտես եք: Ետիկ ե՛ հե՛չ: Հող  
փորողներ եք: Եդ ել հե՛չ... Ղալղով փորել բիլա չիդեք...  
Ինչ հասկացողութուն ունիք: Հե՛չ... Ուտեք, խմեք ու  
պարկեք. ես է ձեր դաղափարի դատողութենը:

ԶԱՂԱՂՅԱՆ — Դե լավ, հերիք ա լեզվիդ տաս... Կոնծի, պրծավ դը-  
նաց... Կրթվածիս տես:

ՄԱՇՈՆ — Եդ վո՞նց ա, վոր դու գիտակից ես, ու ենպես ես, ամա կա-  
մունը չեն ընդունում... Հենց ընենց սլառառ սլառառ ես  
գալիս...

ԶԱՂԱՂՅԱՆ — Ընտեղ առանց սրան ել մուֆտախոռ չատ կա:

ԱՊՈՒՐՅԱՆ — Յես... Ծ'ո յես... Իսկ խոսք որինակ կանեմ ձեզ, հայ-  
տնի յե պատճառը, թե վոչ կատարելապես... Ընչի չեն ըն-  
դունե ընծի... չի՞ դեք... Իսոր խաթեր հմար (ցույց է տա-  
լիս ողու շիշը): Յես խիկ մորս կաթի հետ եմ խմե... Յես  
զայ եղած փչացած մարդ եմ, հին ութիմի մարդ եմ: Իսկ  
մեր կամոնի մեջը իսոր հրմար չատ սարդգ է: Իդոր հրմար  
է չեն ընդունի... Հեպա... հասկո՞ցաք... բլամանժե սուտո-  
նեք...

ԶԱՂԱՂՅԱՆ — Բլամանջեն ել ես դու հըլա հարբանն ել: Ամեն յանից

դուրս են քչել, ել ու՞ր տի գնայիր պարզա կամուռը... են—  
տեղ ամեն գիրել ընդունում են...

**ԱՊՈՒԹՅԱՆ.**—(կատաղում է) Յե՞ս... Ծո յես քու... տապալիւմ...  
Ներեցեք, մեր արտահայտութեանը եկած, խորոված... Ծո,  
յես սպեց եմ դի՞տես, սպեց... Ինձի ոտնիկ կուգան... Ինձի  
բերանի ել ուլաթայիդ կենեն... Ինձ խոր խաթեր հըմար  
կեներեն... ըբը... կոնծե՞լ ես... կոնծել եմ խաթես ուսուլով  
կուքամ, կգտնիմ իմ տեղը ու յուսլայ կպարկիմ ու խռո՞ւ...  
մի քիչմ կխոսցնեմ ու կքնեմ... Իսկ սարախտան կելնիմ  
գործիս... կըսուգոմ ենպես զուլարալը կենեն որ... Հըմը  
յես հե՛չ... գործս կըսկն ե... եզ ե որ կա... (լսմում է) կու  
դա քոյս ինքը ընկ. Մանկելը... հարց կուդա... Դո՛ւ, «երեկ  
կոնծել ես»: Մե աղմ, կոնծ... ու հե՛չ բան ել չի ըսե... վասն  
մերո ինձի խմած հե՛չ չես տեսնի...

**ԶԱՂԱԼՅԱՆ.**—Վրա տուր, վրա տուր, լեզվիդ տակին վոսկոռ չկա...  
**ՄԱՇՈ.**—Եդ ինչ բան ա Մինաս ջան, սիրտդ քեֆ ա ուղել, համաչես  
խմում... (լեցնում է Զաղալյանին, Ապուրյանին և Իրեն) :

**ԶԱՂԱԼՅԱՆ.**—Եխ, Մաշո ջան, քեֆս խաբար ա, գինին ել չի ներքսե  
դնում: Եդ Մարկոսի փեսեն ետոր ինձ խեղդեց... հաստա—  
կեց... կատարյալ... Ըսկի հանորն ել չխնայեց, չան տը—  
ղեն...

**ԱՊՈՒԹՅԱՆ.**—Եդ ո՞վ:

**ՄԱՇՈ.**—Եդ ինչի՞ վրա յեր վոր:

**ԶԱՂԱԼՅԱՆ.**—Ընենց բան ելավ, վոր ել ասելու թահը չկա: Քեֆս  
խաբար ա անում (կենդանանում է) Ես ի՞նչ ա, իսկապես  
ասես թիթու յեն դրել մեղ: Բա Մինաս Զաղալյանը եսա՞ր ա  
քեֆ անում: Եյ, չիլդ քոքի մի տեսամ... Զուր տեղը ա—  
բող չենք խմացնում:  
(Շվին նվագում է: Ապակու կտրուկ բաղխոց)

**ՄԱՇՈ.**—Ես ո՞վ տի ըլի: Միլիցը չըլի: (սեղանից վերցնում է գինու  
շիշը, ամանեղներ և քաֆցնում է քախտի տակ) քաղաքա—  
ցիք... Զնահատակեք վորքեմայրի կնկանը... կասեք, վոր  
ենպես զոնադ եք եկել:

(Նորից կտրուկ բաղխոց)

**ԱՊՈՒԹՅԱՆ.**—(ուղղվում է, ընդունում է վայելուչ տեսք) Հույսով  
եղիր, քուրս, այսինք մաղամա... Յես աղնվական դաջով

կխոսիմ ինոնց հեղ ու ամեն բան ա լա ֆուրչեա կեղնի, ա—  
ղայիս ըսածին պես... (հաղում է)

**ԶԱՂԱԼՅԱՆ.**—Շուն չան վորդիք... Զեն թողնի մարդ մի չունչ քաշի:  
(Նորից կտրուկ բաղխոց)

**ՄԱՇՈ.**—Եթամ բաց անեմ հը՞, ի՞նչ եք ասում:

**ԱՊՈՒԹՅԱՆ.**—Թույլ կո՞ւտաք ըուրս, այսինքն մաղամա, յես բաց  
ենեմ (գնում է դեպի դուռը)

**ՄԱՇՈ.**—Զե, չե, դու նստի... Յես ինքս... տեր մեղա քեղ աստված  
... (խոչակնում ու մոտենում է դռանը)

## ՏԵՍԻԼ 2

**ԶԱՂԱԼՅԱՆ.**—Ճղելու տեղ ել չկա:

**ԱՊՈՒԹՅԱՆ.**—Մեղ հե՛չ ե կարիք չկա ճղելու: Դո՛նադ ենք եկել, պըր—  
ծավ դնաց... կուքան... կուքան...

## ՏԵՍԻԼ 3

(Յերկուսով նայում են դեպի դուռը: Դուռը բացվում է,  
մտնում է Մաշոն, նրա հետևից Համոն)

**ՄԱՇՈ.**—Համեցեք... Բարով, հաղար բարի... Համա լեղաճաք ե—  
լանք հա...

**ՀԱՄՈ.**—Ինչի՞ սուս արիք ձեռաց:

**ԱՊՈՒԹՅԱՆ.**—Համո ջան, Համո, հոգուդ մեռնիմ... Յես քեղ զուր—  
բան, դուն ինձի հե՛չ... (փաթաթվում է նրա վզով և համ—  
բուրում):

**ԶԱՂԱԼՅԱՆ.**—(շշուկով Մաշոյին) Ինչի՞ ներս թողիր: Բարի սհաթ  
չի...

**ՄԱՇՈ.**—Բա վո՞նց կարայի չթողնեմ, այ Մինաս:

**ԱՊՈՒԹՅԱՆ.**—Համո ջան, ախպերս, հոգուդ զուրբան... Դուն ե ըն—  
կար խտեղ:

**ՀԱՄՈ.**—Յես ել եստեղ: (շուրջն է նայում) Սա ո՞վ ա: (ցույց է  
տալիս շվի փչողին)

**ՄԱՇՈ.**—Սրան ընկեր Մինասն ա բերել, ուրախանալու համար:

**ՀԱՄՈ.**—Հը, սա ե՞լ ա ըստեղ: Եդ լավ ա: Ուրեմն, ուրախ կլի:

**ԶԱՂԱԼՅԱՆ.**—Նայած ում հմար:

**ՀԱՄՈ.**—Դե, Մաշո, դինի տուր տեսամ... Որումս չեմ խմել, ետոր  
սիրտս ուզում ա... Ըստեղ մի տեսակ ա... (ցույց է տալիս  
կուրծքը)

ՄԱՇՈՒՆ.—Համեցեք, նստե՛ք... Շատ ուրախ ենք...

ԱՊՈՒՐՅԱՆ.—Համո ջան, եղ ի՞նչ է յարան ջան, ձեռք արնող է:

ՀԱՄՈ.—(նայում է ձեռքին) Ձեռք ել տեսել... Մի կատաղած քոփակ շուն ա կծել, ստակելուց առաջ...

ՄԱՇՈՒՆ.—Շոր կապեմ:

ՀԱՄՈ.—Ձե, չի ուզի:

ՉԱՂԱՅԱՆ.—Երևում ա, շունն առանց ատամ ա յեղել, թե չէ մի ուրիշը չլինեղ կարող եր կրծեր...

ՀԱՄՈ.—(դառնում է դեպի Չաղայանը, նայում է նրան ուղիղ աչքերին) Մի վախեցնի Գեղանից վախեցողը չկա...

ԱՊՈՒՐՅԱՆ.—Հընգերտե՛ք, քաղաքացի՛ք, դրածդանիա... ես ինչ դալաբաղըլ ե... Համո ջան, Մաշո քույրս, դե նստենք մի աչեմ...

ՀԱՄՈ.—(նստում է նստարանին Ապուրյանի կողքին) Դե, պատմի տեսամ ի՞նչ կա, ի՞նչ չկա ձեր կոմունումը:

(Մաշոն մի շիշ է դնում սեղանին):

(մի բաժակ է լցնում և մոտեցնում շրթունքներին. Չաղայանին) Բո պարտության ու իմ հաղթանակի կենացը:

Արի, ուստա Պողոս, պատմիր մի քիչ կոմունի մասին:

ԱՊՈՒՐՅԱՆ.—Մե տեսակ փոխվել ես, Համո ջան: Դե, լավ բան չկա: Կյանքը հենց իդոր հըմար ել է: Իսկ քեզ պատմելու բան ունիմ, ախպեր ջան, ըսի չե, որ իրովունքը իմա է:

ՀԱՄՈ.—Եղ վո՞ր բանը: Ինչ վոր միտա չի:

ԱՊՈՒՐՅԱՆ.—Մտահան ես երե հա՞... Բան չկա: Են սողուն որ կըսեյի, սովորան են ել ի՞նչխ... Ինպես կուղեն, որ ել հե՛... Տուր... Ճաշի վախաղ հարց կուղան... «Ուստա Պողոս, ի՞նչ ունիս, Պիկանդել նատուրալ»... Յոթվերքը վկա... Հոկտեմբերյան պողոտանիկներուն մե ենալիսի կրեմ-բոյուլի թխեցի որ... ել չեմ կրնա... հըլա չողտեց ել...

ՉԱՂԱՅԱՆ.—(հարբելով) Կորչի քու կոմունեն... Պարել եմ ուղում... Մաշո... Արի... պարենք... Ե՛յ, քո շան տղա... Մոափե՞լ ես:

Շվիմ փչում է Մաշոն Չաղայանի հետ միասին պարում են)

ԱՊՈՒՐՅԱՆ.—(քեփվելով դեպի Համոն) Իմացել եմ, Համո ջան, լավ չես ապրե, կան...

ՀԱՄՈ.—Ե, ինչ կարիք կա խոսելու... (քափափարում է ձեռքը)

ԱՊՈՒՐՅԱՆ.—Ականջ երե, Համո ջան, ելի կոմունը եզի, կնդունեն, աստվածածինը, կընդունեն... վախեցուցին քեզի են վախաղ...

ՀԱՄՈ.—Բանը դրանում չի, վոր վախեցրին... Ձեմ կարա, չեմ դնա:

ԱՊՈՒՐՅԱՆ.—Ինչի՞ չես կրնա, կրնաս:

ՀԱՄՈ.—(հարբելով, բռնեցքը խփում է սեղանին) Ե՛յ, ամեն ինչ կորավ... Սաղ կյանքս փչրվեց, կտոր կտոր եղավ:

ԱՊՈՒՐՅԱՆ.—Համո ջան, հոգուդ դուրբան, եղ ինչ խորադա յե, որ կենես:

ՀԱՄՈ.—(մի անգամ ել բռնեցքով գարկում է սեղանին) Լուր... Մի քիչից յարես... (բռնում է գլուխը և ընկնում է սեղանին) (Պարը վերջացել է: Բոլորը գարմանով նայում են Համոյին: Շվիմ մեղմ նվագում է)

ՉԱՂԱՅԱՆ.—(կսմաց, կատաղությամբ) Ընենց կխեղդեյի վոր... (Հանկարծ Համոն վեր է կենում, մի վայրկյան ինչ վոր բան է մտածում)

Ընկեր քաղաքացիներ,

Ականջ դրեք, ընկերներ,

Յես նախկին կոմունար եմ,

Յես մի կոմունար եյի...

Ահա հիշում եմ հենց հիմա

Անմոռանալի որերն ահա...

Պատահում եր առավոտյան

դարձնողը զըրնդում

Ու տրակտորների ահեղ ձայնը

դըղրդում եր դաշտերում:

Ասես Փրոնտ ե ու զնդացիքն է

վորոտում,

Յեվ իրոք վոր Փրոնտ է այժմ,

Ինչ զվարթ եյինք աշխատում,

Ես ամենը անցավ, զնաց առհավետ:

Կոմունա, քո կարոտն եմ քաշում,

Նորից ձեր մեջ, ձեզ հետ լինել եմ վախճում:  
Բայց ուժ չունեմ, կամք չունեմ դամ խնդրեմ:

Եյ, նվազեք, յերգեք, պարեք

Նախկին կոմունարի վիշտը ցրենք:

(ուժասպառ ընկնում է նստարանին, ձեռքով բռնելով գր-  
լուխը, ակնապիշ նայում է դեպի անկյուն և կենտրոնացած  
ինչ վրա բան է մտածում)

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—Մե հասմել խմե, Համո ջան:

**ՀԱՄՈ՝**—(գլուխը չդարձնելով) Վոչ:

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—Կսեմ, արի հետ... Հիմար բաներ կենես... Քեզի հը-  
մար մե ինպիսի սովուղ կեփեմ որ մատներդ կուտես ու  
մեր ողորմած հողի աղան դերեղմանի մեջ չուռ ու մուռ  
կուգա:

**ԶԱՂԱԼՅԱՆ.**—(կարծես ինքն իրեն) Մեռելահացին սովուղը չատ  
կսողի:

**ՀԱՄՈ.**—(վեր է ցատկում) Ի՞նչ: Մեռելահացի՞ն: Ի՞նչ մեռելա-  
հացին:

**ԶԱՂԱԼՅԱՆ.**—Հարբած ես, ախանջդ ձեն ա տվել:

**ՀԱՄՈ.**—(նստելով նստարանին) Ամեն բան կարող ա լինել:

**ՄԱՇՈ.**—(մետնում է Համոյին) Յերեի ողջ դժար ա, մեր աղա...  
Ուղում ես մի լավ խաղ ասեմ: Մենակ ես հիմիկվա յերգե-  
րից չեմ իմանում: Իմ յերգերը հին են:

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—Կարո՞սի պոռնեղը, Մաշո քուրս, մաղամա:  
(Շվիկն նվագում է Մաշոն յերգում է:)

**ՄԱՇՈ.**—Կես գիշերին յես ու յարս միասին:

Նստած եյինք ու մեզ կիշխեր վառ լուսին:

Խոսում եյինք մեր լավ ու վատ որերից

Ու մերթ առ մերթ համբույր քաղում իրարից:

**ՀԱՄՈ.**—(կտրուկ յելնում է) Հերիք ա: Բախական ա: Չեմ ուղում  
եզ տխուր յերգերը: Եսորվանից խաչ եմ դնում են բոլորի  
վրա, ինչ վոր յեղել ա: Քարը դեն եմ գցում ուտերիցս...  
Ապրել եմ ուղում: Ու պտի ապրեմ նոր ձևով (ինչ վոր  
թուղթ է հանում) Ահա կոլխոզնիկների ցուցակը... Եսոր  
վա հաղթանակը:

**ԶԱՂԱԼՅԱՆ.**—(յելնում է, սեղմում է բռունցքը և ատելությամբ  
նայում է Համոյին)

**ՀԱՄՈ.**—(Զաղալյանին) Հեռու կաց, կուլակի մուրթ: Դեն գնա:  
(հաստատ քայլերով գնում է դեպի դուռը)

(Զաղալյան ակամա հետ է քաշվում)

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—Համո ջան, կեցիր, կեցիր կսեմ:

**ՄԱՇՈ.**—Գոնյա ես բոթիլն ել ա խմեյիր:

**ՀԵՄՈ.**—(կանգ է առնում դռնից) Բո՞թիլը Տուր տենամ: (Դառ-  
նում է, վերցնում է շիշը և կանգ է առնում դռան մոտ)  
Ըհը: (բարձրացնում է ու շիշը զարկում է գետին կտոր-  
կտոր անում. գնում է):

(Հետագա տեսարանն առանց բառերի Զաղալյանը վերց-  
նում է սեղանից դամակը և արագորեն դուրս է վագում Հա-  
մոյի հետևից, ենպես վոր նրան չեն կարողանում պահել:  
Պատգա: Լավում է կրակոց, ապա մյուսը: Զարմաֆ: Այն  
պահին, յերբ Ապուրյանն և Մաշոն վագում են դեպի դուռը,  
վարագույրն իջնում է:)

ՎԱՐԱԳՈՒՅՐ

## ՀԻՓԵՐՈՐԻ ՊԱՏԿԵՐ

(Գործողութիւնը տեղի յետնեմում կոմունայում: Սենյակը և կահավորումը նույնն էն, ինչ առաջին պատկերում: Մի հավելում—Լենինի նկարի տակը մրցման մի մեծ տախտակ և կարմիր մատերով: Յերեկոյն յետ: Ընթրիք: Սեղանների շուրջը կոմունարներ ու կոմունարուհիներ:)

### ՏԵՍԻՆ 1

(Ծիծաղ ու խոսակցութիւն յերիտասարդների անկյունում):

1 ՏՂԱՄԱՐԴ.—Եղ խի՞ յետ ըսենց զպլտվել... դուցե նշանելու յե՞ն տանում:

1 ԿԻՆ.—Ուրեմն ըսենց քեզ դուր չե՞մ գալի:

1 ՏՂԱՄԱՐԴ.—Այ սատանին դուր դաս բալամ, սատանին:

1 ԿԻՆ.—Բա նոր տալուն խի՞ էյիր սեր բացատրում:

1 ՏՂԱՄԱՐԴ.—Եղ յե՞ս. փչում ես.

ՁԱՅՆԵՐ.—Ընկար ախպերս, պրծած բան ա, պտի պսակենք:

(Ընդհանուր ծիծաղ: Խոսակցութիւն մի այլ անկյունում):

2 ՏՂԱՄԱՐԴ.—Յետ ասում եմ, սա՛ սովուղ պիկանդ ա:

2 ԿԻՆ.—Յետ քեզ ասում եմ չե—նադուրալ ա: Պիկանդը ուրիշ դաս չի յա ըլում:

3 ՏՂԱՄԱՐԴ.—Այ թե գլխերիդ դու եք տալի: Ձեք հասկանում, ինչ սովուղ ա: Յա սա նադուրիլ ա՞: Սա մեր կոմունինն ա «կոմունիլ»:

2 ԿԻՆ.—Ուստա Պողոսին պտի հարցնենք:

3 ՏՂԱՄԱՐԴ.—Մարդ գտար հարցնելու... Գնա դեղում ասեղ դալի: Նսոր քեֆ ա անում. Չոփուտենց Մաշոյի կշտին ա:  
(Խոսակցութիւնը սեղանի մեջտեղը):

1 ՊԱՌԱՎ.—Նա ինձ թե, դու ասըմա, ուրեմ անաստված ես, վոր կոմինումը եղ անաստվածների հետ ես ապրում: Յետ ել նրան թե՛ այ պատալ, ինչ անենք, վոր անաստված են, ոյ

վոր հալատում ա հալատա... Բա, ասում եմ, կարգը կանոնը, թամզութիւնը: Իսկ ճաշի մասին, ասում եմ, կեր ինչքան քեֆդ կուզի: Ըստեղ նա հեչ քան չասաց, չուռ եկալ ու դնաց:

1 ՏՂԱՄԱՐԴ.—(յերիտասարդների անկյունից) Հը, ի՞նչ կասես, ըն կեր Մանվել չի կարա մեզ կարմիր տախտակիցը հանի...

3 ՏՂԱՄԱՐԴ.—(2-րդ անկյունից) Եղ սեն ու սպիտակը ես իրիկուն կերեա... Ծորդոնը հալաքել պրծե՞լ եք: Այ, եղ ա հա՛...

1 ԿԻՆ.—(յերիտասարդների անկյունից) Բա վոր երկու ցանիչ ենք սարքել... Դուք ի՞նչ եք արել... կովն ա ծնել (ծիծաղ) եղ բանում դուք կապ չունեք... ընդթիւնն ա, ախպերս...

3 ՏՂԱՄԱՐԴ.—(2-րդ անկյունից) Դու հմի ծիծաղի, յետ ել հետո կծիծաղեմ:

### ՏԵՍԻՆ 2

(Գալիս է Մանվելը, քուղքը ձեռին, նրա հետևից Յեփառը:)

ՄԱՆՎԵԼ.—Անուշներ...

1 ՏՂԱՄԱՐԴ.—Հը՞, ետոր վո՞նց ա:

ՄԱՆՎԵԼ.—Այ հիմի կտենաս: (մոտենում է սև ու կարմիր տախտակին, մի փալա է վերցնում, բոլոր գրածները ջնջում է, ապա վերցնում է կավիքը և պատրաստվում է գրելու)  
(Բոլորը դուրս են գալիս սեղանների հետևից և հետևում են նրան):

Առաջին տեղը ետոր բռնեց Յեփառը քուլրիկի 3-րդ բրդ-գաղը... (գալմամբ) Գոմը: (գրում է)

1 ՏՂԱՄԱՐԴ.—Եղ ընչի՞ համար, վո՞նց թե:

ՄԱՆՎԵԼ.—Նրա համար, վոր կթեղն ալեկացրել ա... ու չնայած անասունի հղիութեան, նույն կերով անասունի քաշն ել ալեկացել ա:

3 ՏՂԱՄԱՐԴ.—Հը՞, ծիծաղդ կտրեց:

2 ՏՂԱՄԱՐԴ.—Յեփառը քուլրիկ, տես հըլա, մենք ենք առաջինը:

ՅԵՓՐԱՏ.—Մենք խարաբի չենք տա... դայիմ կացեք:

ՄԱՆՎԵԼ.—Յերկրորդ տեղը բռնեցին կառուցողները:

3 ՏՂԱՄԱՐԴ.—Դե նրանք արժանի յեն, վոր ու գիշեր բանում են:

1 ԿԻՆ.—Բա, մենք հմի վո՞ր տեղն ենք:

ՄԱՆՎԵԼ.—Տրակտորիստները դիջեցին, առաջինից ընկան յեր-  
րորդը:

1 ՏՂԱՄԱՐԴ.—Յես ասում եմ, սխալ ա... Մենք եսոր 2 ցանիչ ենք  
սարքել:

ՄԱՆՎԵԼ.—Բա Ֆորդը՞նք:

1 ՏՂԱՄԱՐԴ.—Ֆորդը՞նք... Անձող չունեցինք, դրնալից ա...

ՄԱՆՎԵԼ.—Նրա համար չեք ունեցել, վոր վախտին չեք հայտնել:  
... Սե տախտակին եսոր դրենք խոհանոցը ու նախ և առաջ,  
նորին պայծառափայլություն, աղայական խոհարար ընկեր  
Ապուրյանին... (Ծիծաղ):

ՁԱՅՆԵՐ.—Այ, թե հա՛... Այ ողուլը ընկավ: Չօխուռենց Մաչոյին  
կհիչի...

ՄԱՆՎԵԼ.—Ինքնակամ հեռանալու և ընթերիքին ուշանալու համար:  
(գրում է Ապուրյանին)

1 ՏՂԱՄԱՐԴ.—Յես ելի ասում եմ, վոր սխալ ա մեզ առաջինիցը  
յերրորդ դեղը... Մեկը չենք արել: մեկը հո արել ենք...

ՄԱՆՎԵԼ.—Հընդեր ջան, պլան կա, որենք կա... բան կա... Ձի կա-  
րելի եղպես դատել...

### ՏԵՍԻԼ 3

(Գալիս է Լուսիկը, շալը գլխին, փաթաթված յերեխան  
ձեռքին)

ԼՈՒՍԻԿ.—Ներող յեղեք, հընդերներ, կարե՞լի յա...  
(Բոլորը դառնում են)

ՄԱՆՎԵԼ.—Ինչի՞ չի կարելի... Կարելի յա, դու ո՞վ ես վոր...

ԼՈՒՍԻԿ.—Յես Համոյի, Ղարիբյանի կնիկն եմ: Նա առաջ ձեռ կո-  
մունիստն եր:

ՄԱՆՎԵԼ.—Գիտենք, գիտենք, ասա... Արի անցի, նստի...  
(Լուսիկը նստում է նստարանին)

Բա հիմի ո՞ւր ա, ի՞նչ ա անում:

ԼՈՒՍԻԿ.—Յես ել նրան եմ ման գալի, սաղ ուրը ջանս դուրս յե-  
կավ... Շատ եր կոմունի կարոտը քաշում... Ասի, բալքի  
տան զալմալալից հետո ձեզ մոտ ա եկել, մի քիչ սիրտը  
բացվի:

ՄԱՆՎԵԼ.—Ձե, նա մեզ մոտ չի գալիս: Իսկ եդ ի՞նչ դաժմադալ ա  
պատահել: Ընտանեկան ա, ի՞նչ ա:

ԼՈՒՍԻԿ.—Ընտանեկան ա, բա ինչ ա: Ինքն ուղում եր կոլխոզ կազ-

մակերպի... Մենք ել ուղում ինք բաժանվի, ուրեմն: Ա-  
սինք, իմ կովը կվերցնենք ու մեր փայը կտանք: Հերս ել,  
ի հարկե, հակառակ եր, առավ ու կովը մորթեց... ու ըս-  
տեղ ել իմ քավորս հետ, Չաղալենց Մինասի բալքի ճանա-  
չեք, սկսում են գեղացոցը համոզել: Թե մի մտեք կոլխոզը:  
(Մանվելի մոտենում է առաջին տղամարդը)

1 ՏՂԱՄԱՐԴ.—Ընկեր Մանվել, մի բողբ դուրս արի, վաղ գործ ա:  
ՄԱՆՎԵԼ.—Ի՞նչ կա:

1 ՏՂԱՄԱՐԴ.—Լուրջ գործ ա...

(Մանվելը ելնում է ու նրա հետ միասին դուրս են գնում  
պատշգամբի դռնից):

ԼՈՒՍԻԿ.—(շարունակում է իր պատմությունը իր շուրջը խմբված  
կոմունարներին) Ուրեմն սկսում են գեղացոցը համոզել,  
վոր չմտնեն կոլխոզը... Դե Համոն ել արինը տաք ա... չի  
համբերում, ի հարկե...

(Բեմի հետևից Մանվելի ձայնը. «Ըստեղ բերե՛ք, ըստեղ»:)

### ՏԵՍԻԼ 4

ԼՈՒՍԻԿ.—Հա, ուրեմն (կտրում է պատմությունը)

(Բոլոր ուկնդիրները ուղղվում են դեպի դուռը, վորտեղից  
գալիս է Մանվելը, նա հետևից հետ-հետ գալով Ապուրյանը  
և 1-ին Տղամարդը, սրանց հետևից գալիս է Համոն: Ա-  
պուրյանը և 1-ին Տղամարդը բերում են վիրավոր Չաղալ-  
յանին:)

ՄԱՆՎԵԼ.—Բերեք, դրեք ետեղ:

(Չաղալյանին բերում ու դնում են առաջին պլանում,  
հատակին:)

ԼՈՒՍԻԿ.—Համո, տեղ աստված, քավոր հետ ես ի՞նչ ա պատահել:

ՄԱՆՎԵԼ.—Մայասիր, աղջիկ: Պատմի տեսամ, Համո, վոնց ելավ ես  
բանը:

ՀՅՄՈ.—(հուզվելով) Ուրեմն ըսենց եր... Մաչոյի մոտից դուրս ե-  
կա ու տուն ելի գալիս ուրեմն... Հենց դուրս եկա թե չե,  
տեսամ մեկը հետևեցս գալիս ա... Շուտ եկա-սա դանակը  
ձեռին հարձակվեց վրես յես ուղեցա փախչեմ... Մի քիչ  
փախա, հանկարծ մի կրակոց... Հետո մեկը... Տեսամ, սա  
ընկավ... Յես մոտ վազեցի... տեսամ պառկած ա... ըստեղ  
Պողոսը վրա հասավ... Ո՞վ եր, ի՞նչ եր չիմացա:

ԱՊՈՒՐՅԱՆ.—Կրակոցի ձենն առա թե չե... եվադի...

ՄԱՆՎԵԼ.—Կայ, —հերթով...

ՀԱՄՈ.—Դե, ինչ արած... Տենամ, ինչ վոր արարա՞յա... Մեր կը-  
մունայինը... ԲՆԵՅԻՆԵՐ ԲԵՐԻՆԵՐ ԸՍՏԵՂ... Սրանից ավել չեմ  
իմանում... Ասես նրա ուշքը գնացած ա...

ԱՊՈՒՐՅԱՆ.—Յես տեսա, որ ճամփեքն մեկըմ վազեց... յես ե  
վադի...

ԶԱՂԱԼՅԱՆ.—(տնիւմ ե, ապա վեր ե կենում, շուրջն ե նայում)  
Սուտ մի ասի, պառավ... Սա ինձ խփեց... Սա... սա...  
Բուռնազովենց փեսեն...

ՀԱՄՈ.—Ի՞նչ ես ասում, այ մարդ... խելքի եկ...

ՄԱՆՎԵԼ.—Դու յեւ սուտ արա: (կռնում և Զաղալյանի վրա) Մի  
պատմի տենամ, վո՞նց ելավ:

ԶԱՂԱԼՅԱՆ.—Սա... սա նազանը հանեց... մեկ... երկու... երկու  
անգամ... հետո չարտեց... թփերի մեջ...

ԼՈՒՍԻԿ.—Համո ջան...

ՀԱՄՈ.—(կատաղելով) Չե, ընկերներ... Նա կատաղությունից,  
թշանամությունից ա եղպես ասում... Բա յես ինձ թույլ  
կտամ...

ԶԱՂԱԼՅԱՆ.—Սա յեր... սա... Սուտ մի խոսի... սաղ վկաները...  
ըստեղ են... Մեռնելուց առաջ եմ ասում...

ՄԱՆՎԵԼ.—Վաղ ձի նստի ու դնա բժշկի ու միլիցի հետևից:

ԶԱՂԱԼՅԱՆ.—Սաղ իրիկունը հետևիցս եր ընկել... վկաների մոտ...  
հազար մի բան ասեց...

ՀԱՄՈ.—(այս ու այն կողմ նետվելով) Ի՞նչ ես ասում այ մարդ...  
եղ վո՞նց կլի... Սուտ ա ասում... յես... (զնում ե դեպի  
դուռը) Չե, յես չեյի... յես չեյի...

ՄԱՆՎԵԼ.—Բռնեք դրան:

ԼՈՒՍԻԿ.—Նա չի ըլի... Նա վոչ մի նազան չուներ... սուտ ա:  
(Համոյի ձեռքերը բռնում են, նա դուրս ե պրծնում):

ՀԱՄՈ.—Ի՞նչ եք անում, տղերք: Լեռն, բաց թող... տղերք... Դուք  
ես ի՞նչ բանի յեք...

ԶԱՂԱԼՅԱՆ.—(հառաչում ե) Կստակեմ յես... ամա դու ի՞մ տե-  
ղակ... բ... բ... անտում կիտես...

ՀԱՄՈ.—Կատաղությունից ա ասում... ընկերներ... ես ի՞նչ բան  
ա... բաց թողեք...

ԼՈՒՍԻԿ.—Կորանք, կորանք...

ՄԱՆՎԵԼ.—Դե լավ, երեխա չես, միլիցը, քննիչը կզան, դատա-  
բանում կքննեն:

## ՏԵՍԻԼ 5

(Այդ պահին պատշգամբից անկատելի կերպով ներս ե գա-  
լիս Բուռնազյանը: Նրա ձեռքերը մեջքին են, ինչ վոր բան  
ե բռնել):

ԶԱՂԱԼՅԱՆ.—Վայ, մեռնում եմ... տերտեր կանչեք, խոստովա-  
նել եմ ուզում:

ՄԱՆՎԵԼ.—Ելի ի՞նչ ես ուզում... Չե մի վարդապետ... թե մեռ-  
նելու յես, տերտեր դա, ելի պտի մեռնես... թե չե բժշկը  
ճար կանի...

ԲՈՒՌՆԱԶՅԱՆ.—(խոշոր փայլերով առաջ ե գալիս) Յես եմ սպա-  
նել սրան... Հրեա... (մեջքից հանում ե յերկիտղանի վոր-  
սորդական հրացանը) Չեմ ուզում մահիցս առաջ մեղքի  
տակ ընկնեմ:

(Լուսիկը ճչում ե):

ՄԱՆՎԵԼ.—Բա եղ ինչի՞ համար արիր, այ հալեմոր:

ԲՈՒՌՆԱԶ.—Սրան չեյի ուզում... փեսիս եյի ուզում սպանեմ... չը-  
դիպավ, ըստեղ սա դուրս պրծավ...

ՀԱՄՈ.—Ես ի՞նչ բաներ եմ:

ԶԱՅՆԵՐ.—Այ քեզ հաներ:

—Ըսկի աչքն ել չի ճարում:

—Ասես քարացած ըլի:

ՅԵՓՐԱՏ.—Եղ վո՞նց սիրտ արիր: Հըս ասածուն ել աղոթք ես  
անում:

ԲՈՒՌՆԱԶ.—Նա իմ տունը քանդեց... սաղ իրիկունը Մաչոյի տան  
մոտ բուսուլը պահում եյի...

(Զաղալյանը հառաչում ե):

ՄԱՆՎԵԼ.—Բերեք զենք նստարանին...

(Զաղալյանին բարձրացնում ու դնում են նստարանին)

Եսպես ել բան: (ծերուկին) Հիմի ի՞նչ պտի անես:

ԲՈՒՌՆԱԶ.—Յես բան չունիմ անելու... Շուտով մեռնելուս վախտն  
ա... Հաչիվը մեկ ա...

ԶԱՂԱԼՅԱՆ.—(Հառաչում ե) Չե, չեմ ուզում, չեմ ուզում...

(Ներս Ե վագում Անթառամը)

**ԱՆԹԱՌԱՄ.**—Յես ել սրան եմ ման դալիս:

**ՄԱՆՎԵԼ.**—Դե ինչ արած, տարեք մի տեղ, զարաուլ քաչեք, մինչև...

**ԱՆԹԱՌԱՄ.**—Եդ ո՞ւմ... ընչի՞ հըմար...

**ՄԱՆՎԵԼ.**—Մարդասպան ա հալեվորդ, վոճրադործ: Ուզում եր փեսին խփի, պատահմամբ իր լավ ախպորն ա սպանել...

**ԲՈՒՌՆԱԶ.**—Ամենայն ինչ ասածու կամքն ա:

2 կոմունար վերցնում են Բուռնազյանին, վորպեսզի տանեն: Անթառամը լաց ու շիվանով ընկնում է դեպի կա:)

**ԱՆԹԱՌԱՄ.**—Այ մարթ, իմ տան ճրագ, իմ լույս... (ուշաքափվում է, նրան տանում են)

**ԼՈՒՍԻԿ.**—(ցատկում է տեղից) Հայրիկ, դոնե մնաք բարով առենք...

**ԲՈՒՌՆԱԶ.**—(կանգ է առնում) Աստված քեզ ների: Մենք մնաք բարով ասելու բան չունենք: Ինքս ինձ համար պատասխանաուր կըլեմ, դու ել վոնց կուզիս, ընենց ել ապրի: Վոնց վոր կայի, ընենց ել մնացել եմ... Գնանք տղերք: (Խաչապրնգում է և 2 կոմունարների հետ միասին դուրս են գնում:)

**ԼՈՒՍԻԿ.**—Ես ի՞նչ բան ա: Երազ ա, ինչ ա:

**ՄԱՆՎԵԼ.**—Երազ չի քաղաղացի, այլ դասակարգային պայքար ա սրա անունը: Հեղափոխության օրենք ա...

(Լուսիկը քաշկիմակը մոտեցնելով աչքերին, լալիս է, նրա տեղով նստաբանին:)

2 **ՏՂԱՄԱՐԴ.**—(մոտենում է Մանվելին) Ընկեր Մանվել, Ձաղալյանը մեռավ:

**ՄԱՆՎԵԼ.**—Մեռավ, ուեմն մեռավ... Պետք ա ակումբ տանել, մինչև միլիցի դալը...

(Ձաղալյանին դուրս են տանում)

(Համոյին) Հիմի ի՞նչ ես մտադիր: Մնա եստեղ, մեր կոմունումը:

**ՀԱՄՈ.**—Մենք, Մանվել ջան, հիմի կարգին կոլխող ունենք աչքեն-րիս տակ... 25 անտեսություն ա...

**ՄԱՆՎԵԼ.**—Այ քեզ կոլխող... Դե, մենք ձեր սաղիդ ել կոմունա կընդունենք...

**ՀԱՄՈ.**—Դե մենք հո հակառակը չենք:

**ՄԱՆՎԵԼ.**—Գնանք կանտորը, քննենք:

(Մանվելն ու Համոն գնում են:)

ՏԵՍԻԼ 7

(Խոհանոցից դուրս են գալիս Յեփրատը և Ապուրյանը: Յեփրատը Ապուրյանի քեից քարշ տալով, մոտեցնում է սև ու կարմիր տախտակին)

**ՅԵՓՐԱՏ.**—Հը վո՞նց ա, կե՞րար, հոգեհան: Սև տախտակին կպար: Հրեա, հիացի: Իսկ մեր բրիգադը կարմիրի վրա առաջին տեղն ա: Ես բոլորը խմելուդ հըմար ա... Բոլա լոթություն անես...

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—(կատալած) Լոթությունը վե՞րն է, ջուրս, ես ի՞նչ բան է, ես վե՞ր զակոնի օրենքովն է: Եսոր իմ հանգստության օրն է, ջուրս, ես ինչ կենեն: Յես հընդեր Մանվելին զանգատ կենեմ... (գնում է գրասենյակ)

**ՅԵՓՐԱՏ.**—Գնա, դնա, ախմախ քովակ... Նա քեզ զակոն շանց կտա... (մոտենում է Լուսիկին) Դու ել նստել ու մնացել ես... վայ ես տալի գլխիդ... Երեխիդ մտիցդ դցել ես...

**ԼՈՒՍԻԿ.**—Սաղ որը չեմ կերակրել:

**ՅԵՓՐԱՏ.**—Դե դնա տուր, մեղք ա: Արի տանեմ մսուրը... Մի տես մեր կարգ ու կանոնը... ընտեղ ել կկերակրես... Բան չկա, դարդ մի անի... Մեղքը՝ սարսաղ բան ա... դործ անել ա պետք, վոչ թե ախ ու վիչ անել... Նեխանք:

(գնում են միասին:)

ՏԵՍԻԼ 8

**ԱՊՈՒՐՅԱՆ.**—(դուրս է գալիս խոհանոցից, մոտենում է տախտակին ու նայում է իր ազգանունը սև մատում) Մո, ես ի՞նչ կենեն... վոչ... կներեք պաժալուստա... դյուտարարին սև

տախտակին գրել... (ապա մտածելով) Ախ, իդպե՞ս հա՛,  
էհ, ինչ ըսեմ... բան չկա... Հէ լե՛, աչենք գալող շաբթուն  
ի՞նչ կեղնի... Հե՛չ բան է չի եղնի... Ապուրյանը կարժիր  
տախտակին կեղնի... Դուք հըլե կեցեք, յեա ձեզ ցույց  
կուղամ...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՎԵՐՋ



ՀՀ Ազգային գրադարան



NL0312480

9976

ԿԻՆՈ 30 ԿՈՊ. (8 լ.)



В. АВЕРЯНОВ

ПРОРЫВ

Госиздат ССР Армении  
Эривань—1981

891.71

UX-79